Հրատարակւում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Redaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ՛ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Redaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱԽԱԳԸ
Հրաւիրում է 1-ին և 2-րդ կարգի պ.պ. վաճառականներին
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
որ պիտի կայանայ կիւրակէ, մարտի 2 ին, առաւօտեան ժամը $11\frac{1}{2}$ ին, քաղաքային խորհրդարանի տան մէջ։ Պարապմանց առարկաներն են.
1) 1896 թուի գումարների ելմտից հաշիւը և ուրիշ գործեր, որոնք վերաբերում են վաճառականական դասակարգին և 2) վաճառականների աւագի և նրա օգնականների ընտրութիւնը 1897 թուի համար։ (1-1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տաճկա-Հայաստանում թշուառներին օժանդակելու գործը։
Տագնապը սաստկանում է։
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մակար կաթողիկոսի իրեղէնների յափշտակման գործի քննութիւնը։ Նուիրաբերութիւն ի յիշատակ հանգուցեալ Միրզա Աթամալեանի։ Թիֆլ. քաղաքագլխի առաջարկութիւնը կառավարչապետին դիմաւորելու մասին։ Կառավարչապետի օգնական Ֆրէզէյի ժամանելու առիթով։ Բաթումի յունաց հիւպատոսը։ Տնային ուսուցչութեան վկայականներ։ Պ. Խ. Մալումեանի քառասնօրեայ բանտարկութեան առիթով։ Կերոսինի գինը Թիֆլիզում։ Ստացուած գիրք։ Նամակ Խըմբագրութեան։ Նամակ Սիմֆերոպօլից։ Նամակ Մոսկվայից։ Հայկական երեկոյթ Բագւում։ Գանձակից։ Նամակ Փարիզից։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պարապ ժամեր։
ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—Իմ պատասխանը պ. Գարեգին Ենգիբարեանին։
ՋԱՆԱՁԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՇՈՒԱՌՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Երբ Կովկասում և առհասարակ Ռուսիայում Կայսերական թոյլտւութեամբ հիմն է դրվում մեր երկիրը փախած հայ գաղթականների կանոնաւոր օժանդակութեան գործին, հետաքրքրական է ծանօթանալ և այն օժանդակութեան սիստեմի հետ, որ ձեռք է առնուած գլխաւորապէս ամերիկական միսիոնարների կողմից բուն Տաճկահայաստանում, ուր հարիւր հազարներով չքաւորներ, տասնեակ հազարներով որբացած ընտանիքներ և մանուկներ կարօտ են անմիջական օգնութեան։

Այդ օժանդակութեան վերաբերմամբ մեզ ուղարկուած է շատ կարևոր և առանձին ուշադրութեան արժանի մի տեղեկագիր, որ անշուշտ անծանօթ չպիտի լինի և ռուսական բարձրագոյն շրջաններին և մամուլին *)։

Բացի օժանդակութեան վերաբերեալ դոկումենտներից և ծրագրից, տեղեկագիրը բովանդակում է իր մէջ և տիկին Գլադստոնի 85 ամեակի տօնելու մանրամասնութիւնները, որի հետ կը ծանօթացնենք ընթերցողին «Արձագանքի» հետեւեալ համարներում, իսկ այժմ հարկաւոր ենք համարում թարգմանաբար առաջ բերել այն բոլոր դոկումենտները, որոնք վերաբերում են բուն երկրում օժանդակութեան գործի կազմակերպելուն։

*) „How to Save Alive the Orphan childern of Martyrs in Armenia". New-Iork.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱՐՕՏԵԼՈՑ ՄԱՍԻՆ

Ինչպէս ազատել կենդանի հայ նահատակների որբերին

«Եթէ կոտորուած են 75 հազար հոգի, որբ են մնացել գոնէ 100 հազար։ Ահա թէ որտեղ քրիստոնէական բարեգործութիւնը կարող է կատարել ամենաազնիւ գործերից մէկը։ Այստեղ բաւական է ամսական մի դոլլար (2 ռուբլի) հագնուելու և կերակրուելու համար»։

Դօքտոր Կիր Հեմլին

«Որբերը տասնեակ հազարներով թափառում են զուրկ ապաստարանից, զուրկ օգնութիւնից։ Որչափ որ հարկաւոր էին նուիրաբերութիւններն անցեալ տարի, այժմ անհրաժեշտ են անյապաղ և ամենուրեք։ Այսպիսի հանգամանքներում այդ խորին թշուառութեան մէջ ընկած ժողովրդին անելիք օգնութիւնը կը լինի ոչ միայն նիւթական օժանդակութիւն, բայց և կլինի իսկական բարոյական նեցուկ, առանց որոյ այդ նահատակները կարող են բոլորովին կորցնել իրանց հաւատը առ Աստուած և առ մարդիկ»։

Դօքտոր Գրէս Ն. Կիմբալլ

«Թող Ամենաբարձրեալը մեր վերջին ժամին վարուէ մեզ հետ այնպէս, ինչպէս մենք վարվում ենք մեր հայ եղբայրների և քոյրերի ու նրանց մանուկների հետ, նրանց այս անսահման վշտի րոպէին»։

Փ. Է Ուիլլըրդ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Արդէն երկու տարուց աւելի է անցել այն օրից, երբ սկսուել են Թիւրքիայում խաղաղ աշխատաւոր հայ քրիստոնեաների կոտորածները։ Ամբողջ մի երկիր 500 մղոն երկարութեամբ և 300 մղոն լայնութեամբ (այդ տարածութիւնը հաւասար է Նոր Անգլիային, Նիւ-Եօրքի նահանգին և Պէնսիլվանիային) հարիւրաւոր գիւղերով և քաղաքներով ենթարկուեցին սպանութեանց, բռնաբարութեանց և կողոպուտների սարսափներին։ Զոհերի թիւը հասնում է 75 հազարի, գլխաւորապէս ընտանիք կերակրող տղամարդիկ, առեւտրականներ, ուսուցիչներ, եկեղեցու պաշտօնեաներ. կենդանի են մնացել գլխաւորապէս կանայք և մանուկունք, զուրկ ապրուստի որեւէ միջոցից, կատարելապէս աղքատացած, թւով 300 հազար։ Կողոպտուած և այրուած տների և խանութների թիւն է 50,000։

Գազանական կոտորածի ամենասոսկալի հետեւանքներից մէկը հայաստանում հազարաւոր որբ մանուկների թշուառ, անօգնական դրութիւնն է. մանուկների, որոնցից շատերը կորցրել են իրանց ծնողներին—մորթուած. իսկ մնացածները զըրկուելով քրիստոնէութեան համար նահատակուած հայրերից, մայրեր ունին, որոնք տանջվում են թուրքաց հարեմներում։

ԱԿՆԱՏԵՍՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՕՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պաշտօնական յայտարարութիւն միսս Կլարա Բարտոնի

«Արշիպելագոսի, Սև և Միջերկրական ծովերի մէջ տեղը այժմ ապրում է մի ազգաբնակութիւն թւով 1,500,000 և պատկանում է հայկական ցեղին, որ կէս-կուլտուրայի յայտնի աստիճանի վրայ է գտնվում և դաւանում է Քրիստոսի կրօնը։ Համաձայն վերոյիշեալ ինտելիգենտ, անաչառ, բազմաթիւ երկրներում գտնուած և կենսագէտ անձանց վկայութեանց, որոնց հաղորդածները բոլորովին համաձայն են մեր գործակալների ժողոված ճիշտ տեղեկութեանց հետ — այժմ այդ ազգաբնակութիւնից մօտ 200 հազար հոգի, տղամարդիկ, կանայք և մանուկներ զրկուած են տնից, մնացել են անապաստան, անհագուստ, անճրագ, անհաց, զուրկ բժշկական օգնութիւնից և դեղերից, զուրկ քաղաքակրթութեան այն բոլոր բարիքներից, որոնք պահպանում են առողջութիւնը և երկարացնում են մարդկային կեանքը։ Միայն մնացած աշխարհի մարդասիրութիւնը և քրիստոնէական բարեգործութիւնը կարող են այն նահատակներին ապրելու միջոցներ տալ։ Վերոյիշեալ ցուցմունքները ամենքը միաձայն վկայում են, որ առանց նիւթական օգնութեան բարբարոսութեան այդ զոհերից 50 հազար հոգի կարող են կարօտութեան պատճառով կոտորուել մինչև 1897 թուի մայիս ամիսը։ Մեզանից ոչինչ ժողովուած նպաստները բաժանելու համար աւելի լաւ միջոցներ չգտաւ քան բարեգործութեան նուիրուած միսիօներները, որոնք ապրում են երկրում և մեր (ամերիկական) կառավարութեան պաշտօնեաները, որոնց գործերը ապացուցանում են թէ նրանք կարեկցում են այդ թշուառ ժողովրդի վիճակին»։

ՊԱՐՈՆ Դ. Վ. Վ. ՊԻՏ, Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ, գրում է.

«Մենք պիտի պատրաստ լինենք և ցրտերը հասնելուն պէս կրկնապատկենք մեր ջանքերը։ Առաջիկայ աշխատանքները մեզ սոսկումն են պատճառում։ Դրութիւնը միանգամայն սարսափելի է և օր ըստ օրէ աւելի վտանգաւոր է դառնում։ Քրիստոնէական սէրն առ մերձաւորը և բարեգործական բոլոր զգացմունքները մեզ հարկադրում են ջանալ, այժմ ամեն կերպ առատ նպաստներ ժողովել յօգուտ այդ թշուառ և ճընշուած ժողովրդի»։

ԴՕՔՏՕՐ Կ. Փ. ՀԷՏԸ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՓՐԱՏԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ գրում է.

«Մինչև այժմ մեր օժանդակութիւնը կայանում էր միայն նրանում, որ աշխատում էինք պահպանել տաճկական գազանութեան կենդանի մնացած զոհերի գոյութիւնը։ Բայց թէ թշուառ ժողովուրդը որքան մօտ է սովամահին՝ կարելի է դատել նրանից ինչ որ ես տեսայ իմ այցելած գիւղում։ Առաջ այդ գիւղում 150 տուն կար, իսկ այժմ նրանցից 15-ն անգամ չէ մնացել, միւսները բոլորն աւերուած են։ Կանգուն են մնացել միայն պատերը, որոնցով կարելի է դատել թէ որքան գեղեցիկ է եղել այդ գիւղը։ Բնակիչները շրջում են ցնցոտիներ հագած, նրանց տներում մահճակալներ չկան, ամբողջ ձմեռ մարդիկ քնել են մերկ յատակի վրայ, առանց ծածկուելու։ Չորս կողմը, շրջակայքում չեն երևում ոչ ոչխար, ոչ տնային անասուն, ամբողջ գիւղում միայն երկու շուն են մնացել։ Տներում ես չգտայ ցորենի պաշար։ Մի քանի տներում մի քիչ հաց կար։ Ամեն տեղ միայն կան խոտի փոքրիկ կալոցներ, խոտի, որ այժմ նրանց գլխաւոր կերակուրն է։ Կանանց և երեխայոց երեսները դեղնած են և մաշուած։ Ես մի փոքր տղայի հարցրի թէ արդեօք այսօր նա հաց կերե՞լ է. Նա պատասխանեց—«ոչ, միայն խոտ»։ Մի քանի մանուկներ ասացին թէ՝ մի մի կտոր հաց են կերել մի ձեռքի մեծութեամբ։ Երբ մենք նստեցինք հողի վրայ, այդ գիւղի բնակիչներով շրջապատուած, այդ ժամանակ երեխայք պոկում էին խոտը և ուտում էին արմատներն ու տերևները։ Որչափ որ ես կարող եմ դատել, այդ մարդիկ սովամահից բաժանուած են միայն մի քանի օրով։ Ես յոյս ունիմ որ կարող պիտի լինեմ նրանց օգնել և ազատել սովամահից. այժմ ես ցորեն եմ առնում, որ ուղարկեմ այդ գիւղում բաժանելու։ Բայց ինձ սարսափեցնում է այն միտքը թէ՝ յետոյ ինչ պիտի լինի։ Դուք ինձ ասում էք թէ նպաստները դադարում են։ Դա նշանակում է որ այստեղի ազգաբնակութիւնը պիտի սպառէ դանդաղ մահուան։ Այս տանջուած նահատակները մեզ հանդիպում են աղաչական նայուածքով և հարցնում են. «միթէ մեզ ոչ ոք չպիտի օգնէ»։ Ամբողջովին ձեր խղճմտանքին եմ յանձնում այդ վշտալից աղաչանքը։

Միթէ ժամանակ չէ լրջօրէն ուշ դարձնել այդ հարցին։ Իմ սիրտս մաշուել է տանջանքների այդ տեսարաններից, այդ զրկանքներից, որոնց առաջն առնելու ոյժ չունինք։ Այս օրերս երբ ես անցնում էի մի գիւղով, գիւղի բոլոր ժողովուրդը դուրս վազեց ճանապարհի վրայ և լալով գոչում էր դէպի մեզ. «քաղցած ենք»։ Այդ աղաղակը չէ հեռանում իմ ականջներից, ինձ հալածում է...

(Կը շարունակուի։)

ՏԱԳՆԱՊԸ ՍԱՍՏԿԱՆՈՒՄ Է

(ԿՐԵՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ)

Քաղաքական աշխարհը անհամբեր սպասում էր, թէ ինչ կըպատասխանէ Յունաստանը պետութեանց հաւաքական յայտագրին։ Այժմ հեռագիրը հաղորդում է այդ պատասխանի կարճ բովանդակութիւնը, որից երևում է, որ Յունաստանը մնում է անդրդուելի։ Շատ դժուար է ի հարկէ դատել այդ պատասխանի մասին հեռագրական շատ համառօտ տեղեկութիւնից, սակայն այդչափից ևս երևում է, որ Աթէնքի կառավարութեան և ամբողջ հելլենական ազգի ներկայ դրութիւնը չափազանց տրագիքական է։ Փարիզի լրագրներն—ինչպէս երևում է—յունական պատասխանի քաղաքական ոճից եզրակացնում են թէ Յունաստանն արդէն պատրաստ է զիջումներ անել Եւրոպային, սակայն աւելի ճիշտ են հասկացել նրան անգլիական թերթերը, որոնք Յունաստանի այդ պատասխանի մէջ տեսնում են քաղաքավարի մերժումն որևէ համաձայնութեան։ «Յունական կառավարութիւնն—ասուած է պատասխանի մէջ—կատարելապէս համաձայն է պետութեանց այն հոգատարութեան, թէ պէտք է պահպանել համաշխարհային խաղաղութիւնը և Կրետէի ազգաբնակութիւնն ազատել վերջնական աւերումից։ Նա ենթադրում է, որ Կրետէի ինքնավարութեան համար պետութեանց կազմած ծրագիրը չէ կարող համապատասխանել նրան ծնունդ տուող վեհանձն նըպատակներին և թէ այդ ծրագրի վիճակը նոյնը կլինի, ինչ որ եղել է միւս շատ ծրագիրներինը, որոնց իզուր են աշխատել իրագործել»։ Ի հարկէ որչափ քաղաքավարի են այդ խօսքերը, նոյնչափ դառն սրախօսութիւն կայ նրանց մէջ Եւրոպայի «վեհանձն նպատակների» վերաբերմամբ, որովհետև Եւրոպան սպառնում է այդ «վեհանձն նպատակները» իրագործել Կրետէի քրիստոնեայ ազգաբնակութիւնը սովի մատնելով և Յունաստանը ռմբակոծելով։ Այդ գիտէ և տեսնում է Յունաստանը, ուստի նա իւր պատասխանի մէջ աշխատում է համոզիչ լեզու գործածել պետութեանց վերաբերմամբ, ասելով—«եթէ Եւրոպայի նոր առաջարկութիւնը անպէտք լինի կարգը վերջնականապէս վերականգնելու համար—ինչպէս համոզուած է յունական կառավարութիւնը—այն ժամանակ թուրքերը կրկին պիտի աւերեն կղզին։ Ուստի յոյն կառավարութիւնը *համոզելով համոզում* է պետութիւններին չխնդել ծրագրուած ինքնավարութեան իրագործումը, այլ նախապատիւ համարել Կրետէն Յունաստանի հետ միացնելը»... Սրբազան պարտաւորութիւնը—ասուած է պատասխանի մէջ—հրամայում է Յունաստանին չմատնել Կրետէի քրիստոնեաներին մահմեդականների ձեռքը։

«Եթէ պետութիւնները յունական զօրքերին յանձնեն կղզու վրայ կարգ վերականգնելը, պետութեանց ցանկութիւնը շուտով կըկատարուի»։ Վերջ ի վերջոյ յայտագիրը խնդրում է պետութիւններին դիմել Կրետէի ժողովրդին և նրանից իմանալ՝ թէ ինչ տեսակ վարչութիւն է ցանկանում ինքը Կրետէն»։

Ճշմարիտ է, այս պատասխանի լեզուն դիւանագիտական է, բայց այնչափ պարզ է, որ հասկանալի է նոյն իսկ դիւանագիտական տարրական գիտութիւնից զուրկ ամեն մի քաղաքացու։ Յունաստանը յայտնում է թէ համաձայն է Կրետէն խաղաղացնելու պետութեանց վճռին, և ինքն իւր վրայ է առնում այդ պարտաւորութիւնները, նա մինչև անգամ յայտնում է թէ յունական նաւատորմիղը յետ կըկանչուի, բայց յունական զօրքերը պիտի մնան կղզում։ Յոյն կառավարութեան անընկճելի զէնքը դիւանագիտութիւնը չէ ներկայ դէպքում, այլ պատմութիւնը, կղզու անցեալը, տաճկական վարչութեան վարք ու բարքը, փաստերը, այդ է պատճառը որ նա ասում է թէ «սրբազան պարտաւորութիւնը հրամայում է Յունաստանին չմատնել Կրետէի քրիստոնեաներին մահմեդականների ձեռքը»։ Պարզ է, ուրեմն, որ Յունաստանը վճռել է, որ ոչ մի յոյն զինուոր կենդանի չդուրս գայ Կրետէից, մինչև որ այդ կղզին իրապէս չ'ազատուի տաճկական լըծից։

Թէ որչափ հաստատ է այդ վճիռը, ցոյց են տալիս և հետեւեալ տեղեկութիւնները.—„Local Anz." հաղորդում է, թէ Գէորգ թագաւորն ընդունելով կրետական պատգամաւորներին, որոնք եկել էին ուղերձ մատուցանելու Կրետէն Յունաստանի հետ միացնելու համար—ասաց նրանց. «Ձեզանից է կախուած ձեր գործողութեանց տոկունութեամբ ստիպել եւրոպական պետութիւններին զիջումն անել, որովհետև, բարեբաղդաբար, խնդիրը միայն կառավարութիւնների մասին է և ոչ եւրոպական ազգերի, որոնք ամենքն էլ մեր կողմն են։ Ես հաստատ համոզուած եմ, որ կղզու վրայ կատարեալ կարգ վերականգնելու համար պետութեանց նոր ջանքերը յաջողութիւն չեն ունենալ. հանգստութիւնը այնտեղ կը տիրապետի միայն այն ժամանակ, երբ կղզին միանայ Յունաստանի հետ»։

Բացի դրանից, ինչպէս հաղորդում են լրագրները, Գէորգ թագաւորը և կառավարութիւնն ամբողջովին կախումն ունին ազգային կոմիտէներից, որոնք պահանջում են Թիւրքիային պատերազմ յայտարարել, եթէ միայն Յունաստանը զրկուի Կրետէից։

Հետեւելով մեր անցեալ տեսութեանց սիստեմին՝ քաղաքական բանակցութիւններից անցնում ենք այն փաստերին, որոնք տեղի են ունենում Կրետէում։ Չնայելով Յունաստանի գլխին որոտացող քաղաքական սպառնալիքին՝ գնդապետ Վասոսը Կրետէում կարգադրութիւններ է անում իբրև կղզու կառավարիչ հրամանատար և միայն խուսափում է եւրոպական զօրքերի հետ ընդհարումն ունենալուց։ Ստավրոս բերդի գրաւումով—ասում է «Voss. Ztg.» նա ոչ թէ խօսքով, այլ գործով բողոքեց նրանից պահանջուած անգործութեան դէմ։ Եւ այդ հանգամանքը կրետացիների մէջ միայն ամրապընդում է Յունաստանի հետ միանալու ցանկութիւնը։ Ուշադրութեան արժանի է այն, որ կղզու մահմեդական ժողովուրդն իսկ սկսում է համոզուել թէ՝ տաճկական տիրապետութեան պէտք է վերջ տրուի։ Մարտի 1-ին (ն. տ.) վերջացաւ 8 օրուայ զինադադարի ժամանակամիջոցը և այդ օրը Կանէայի մահմեդականներից մի ընտրեալ պատգամաւորութիւն ներկայացաւ յունական հիւպատոսարանի քարտուղար պ. Բարակլիսին և խնդրեց կարգադրել, որ յունական զօրքերը գրաւեն Կանդանօ քաղաքը, ապա թէ ոչ պաշարուած թուրք զինուորներին կըկոտորեն յոյն գինուորները։ Բարակլիսը խորհրդակցեց թուրք նահանգապետի օգնականի և եւրոպական հիւպատոսների հետ և նրանք նոյն խորհուրդը տուին։ Այն ժամանակ Բարակլիսը խնդրեց որ նոյն օրը յաջողեցնեն իրան տեսնուել Վասոսի հետ, առանց որի դժուար է իրականացնել այդ ծրագիրը։ Բայց այդ նոյն օրն արդէն տեղեկութիւն ստացուեց, թէ յունական թնդանօթաձիգ զօրքն արդէն աւերել է Ստավրոս բերդը, իսկ Կանդանօ քաղաքն ինքն անձնատուր է եղել յոյներին։ Վասոսն ուրախութեամբ պակսեցնում է Կրետէի մահմեդականների թիւը՝ թոյլ տալով նրանց, որ ազատ հեռանան նոյն իսկ յունական նաւերով։ Յունական «Միտուլիս» նաւը վերադարձաւ Սամոսից, ուր իջեցրել էր 98 կրետացի թուրքեր և թուրք օֆիցերներ. դրանք ամենքն էլ շնորհակալութիւն յայտնեցին նաւապետին իրանց հետ քաղաքավարի և մարդասիրաբար վարուելու համար։

Այս փաստը ցոյց են տալիս, որ իրապէս Յունաստանը տիրապետում է Կրետէին։

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

—

ՅՈՅՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐ

„Speaker" ժուռնալը հետևեալ դիտողութիւնն է անում յոյների և հայերի վերաբերմամբ.

«Յոյները, որոնք բնականաբար զգում են, թէ յուսավրէպ եղան իրանց անձնական վարձատրութեան նկատմամբ՝ որ պէտք էր վայելէին իբրև արդիւնք իրանց քաջագործութեան, լաւ կանեն, եթէ յիշեն բուլղարական միջադէպը և համբերութեամբ սպասեն։ Մենք չենք կարծում, որ շատ անգլիացիներ պիտի օգնեն նրանց, եթէ նրանք հակառակ մի ուղղութիւն բռնելով՝ սկսեն մարտել Թուրքիայի դէմ ոչ թէ Կրետէի ազատութիւնը ձեռք բերելու՝ այլ այդ կղզին գրաւելու համար։ Չէ կարելի մոռանալ, թէ Կրետէի հարցը միայն մի փոքր մասն է կազմում արևելեան հարցի՝ որով այժմ Եւրոպան զբաղուած է։ Ուրախութեամբ տեսնում ենք, որ մեր փաստերին ոյժ է տալիս «Daily News»-ը իւր զօրաւոր խօսքերով։ Միակ՝ յոյսը հայերին փրկելու, առանց Եւրոպայի վրայ բերելու մի ընդհանուր պատերազմի արհաւիրքները, կայանում է այն բանում, որ Եւրոպայի համերաշխութիւնը պահուի։ Բոլոր այն խօսքերը, որոնք լորդ Ռօզբերին ասաց իւր Էդինբուրգի բանախօսութեան մէջ, այնչափ ճշմարիտ են այժմ, որչափ նրանց արտասանած օրը։ Արդ, եթէ յոյները իրանց Անգլիայում և ուրիշ տեղերում եղած բարեկամներից քաջալերուելով՝ որոշեն հետևել մի այն պլանի ընթացքի, որ խորտակէ Եւրոպայի համերաշխութիւնը, նրանք այդպէս անելով՝ հայերի բաղդը վերջնականապէս պիտի կնքեն։ Արդարև յոյները բուռն և խիստ այս պատճառով պէտք է իրանց բարոյական պարտքը համարեն կանգ առնել, և առայժմ խոնարհուեն Եւրոպայի կամքին ու ոյժին մինչև իսկ եթէ չլինէին այլ պատճառներ Եւրոպային անսալու։

—

ԿՐԵՏԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գ. ԿԸՐԶՕՆ

Գ. Կըրզօնը Ուէստմինիստր Պալէս Հօտէլում, մի խնճոյքի միջոցին, խօսելով կրէտական հարցի նկատմամբ, ի միջի այլոց ասաց հետևեալը.—«Բացի այս՝ մի վերին աստիճանի զօրաւոր պատճառ կայ, Կրետէի խնդրի այս լուծումն ընդունելու։ Կրետէի խնդիրը չէ միակ խնդիրը, որ օսմանեան կայսրութեան վերաբերմամբ այժմ Եւրոպայի սեղանի վրայ է։ Թուրքական տիրապետութեան ուրիշ մասեր էլ կան, որոնք աւելի կարևոր են, քան Կրետէն և որոնց վերաբերմամբ դեսպանները նորերս վերջացրին իրանց խորհրդակցութիւնները Կ. Պօլսում, և պատրաստեցին իրանց տեղեկագիրը, և պետութիւնները հէնց իրանց ուշադրութեան առարկայ պիտի անէին ընդհանուր ռէֆօրմների այդ մեծ ծրագիրը և ընդունել տային, եթէ միաբան մնային։ Միթէ կարելի է, որ այս երկրում կուսակցական զգացումներին թոյլ տրուի ընդմիջելու և խափանելու այս օգտաւէտ արդիւնքը։ Եւրոպայի յոյսը, քրիստոնեայ աշխարհի յոյսերը կախուած են պետութիւնների համերաշխութեան այն միակ թելից, որ գտնվում է Կ. Պօլսում։

Ես յոյս ունիմ, և կարծում եմ, որ այս մի քանի օրերի ընթացքում, այս ծանր, ճակատագրական օրերում, ոչ մի բան չպիտի խօսուի կամ գործուի այս երկրում կտրելու այն թելը կամ խորտակելու այն յոյսերը»։ (Ծափահարութիւն)։

—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄՆ

Յայտնի է թէ ինչ աղմուկ բարձրացրաւ քաղաքական աշխարհում «Վօլֆի հեռագրական գործակալութեան» հաղորդած լուրը, որ վերաբերում էր Ռուսիայի բռնած քաղաքականութեան Կրետէի խնդրում։ Այժմ Վիեննայի և Փարիզի լրագրներում տպագրուած է Պետերբուրգից փետրվարի 16-ից ուղարկուած հետևեալ հեռագիրը—«Խնդրում ենք հրատարակել, որ «ռուսական հեռագրական գործակալութիւնը» լիազօրութիւն է ստացած դրականապէս յայտարարել թէ՝ ոչ լրագրութեան, ոչ հեռագրի միջոցով ռուս կառավարութիւնը չէ հրատարակել ոչ պաշտօնական և ոչ կիսապաշտօնական որևէ տեղեկութիւն Կրետէի խնդրում իւր բռնած դիրքի վերաբերմամբ։ Այն ամենը, ինչ որ երևացել են այդ առթիւ արտասահմանեան մամուլի մէջ իբրև լուրեր կամ հեռագրներ, գործակալութիւններից կամ յատուկ թղթակիցներից — մասնաւոր թղթակցութեանց բնաւորութիւն ունին»։

Այդ պաշտօնական յայտարարութիւնը հաղորդուել է նաև „Correspondenz Bureau"-ի և «Հաւասի» գործակալութիւններին և „Cor. Bur." պատասխանել է, թէ ինքն առանձնապէս դիմել է «Վօլֆի գործակալութեան» և պատասխան է ստացել, որ Վօլֆի գործակալութեան փետրվարի 14-ին հրատարակած հեռագիրը հաղորդուած է իբրև հաստատ և ռուսական պաշտօնական աղբիւրից ստացուած տեղեկութիւն։

—

ԿԱՐՃ ԵՒ ԱԶԴՈՒ

«Daily News-ի» հռոմի թղթակիցը փետր. 26-ին հաղորդում է հետևեալը.—«Ամենավստահելի աղբիւրներից տեղեկանում եմ, որ պետութիւնները որոշել են, կրետական խնդիրը կարգադրելուց յետոյ, ազդուապէս գործել, և մինչև իսկ սուլթանին գահընկէց անել, եթէ դեսպանների մշակած ռէֆօրմները չընդունի և անկեղծաբար և փութով չիրագործի»։

—

ԿՐԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Աթէնքից հեռագրում են «Temps» լրագրին թէ՝ կրետացի 39 պատգամաւորները, Դէնիս եպիսկոպոսի առաջնորդութեամբ, ներկայացրին յունաց թագաւորին մի մեմօրանդում, որի մէջ յայտնում են թէ՝ Կրետէի ինքնավարութիւնը չէ կարող վերջնականապէս խաղաղացնել կղզին, այլ միայն նոր յեղափոխութիւն կ'առաջացնի և եւրոպական խաղաղութեան նոր վտանգներ կըսպառնայ, ուստի կրետական ժողովուրդը հաստատ վճռել է շարունակել մրցումը, անպատճառ միացնել Կրետէն Յունաստանի հետ և միանգամայն վերջ տալ կղզու վրայ տիրող անիշխանութեանը։ Պատգամաւորները պնդում են, թէ նոյն իսկ կղզու մահմեդականները խոստովանում են թէ ներկայ դժուարութիւններից ազատուելու միակ հնարը Յունաստանի հետ կղզու միացումն է։

—

ՍՈՒԼԹԱՆՆ ԱՆԶՕՐ Է

Կանէայից հեռագրում են „Königsb. Hartung. Ztg."-ին՝ թէ Կրետէի մահմեդականները դիմել են Թէֆիկ-փաշային և խնդրել, որ սուլթանի պաշտպանութիւն ցոյց տայ այն մահմեդական ընտանիքներին, որոնք պաշարուած են յոյն ապստամբներից, Թէֆիկ-փաշան պատասխանել է, թէ սուլթանն այժմ անզօր է. մեզ վրայ չպէտք է յուսալ այլ ևս—ասել է Թէֆիկը—այլ Եւրոպայի վրայ, միայն սա կարող է յոյն զօրքերին դուրս հանել կղզուց։

—

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՍՍՈՍԻ ՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գնդապետ Վասսոսը դիմել է Կրետէի ապստամբներին նոր յայտարարութիւնով, որի մէջ յայտարարում է թէ պետութեանց սպառնալիքները չէ կարող հարկադրել նրան յօժարակամ թողնել իւր գրաւած դիրքերը, որոնց կրետացիք տիրել են իրանց արեան գնով կռիւներ մղելով և թէ՝ չնայելով պետութեանց սահմանած հսկողութեան, յոյն զօրքերը ուտեստի և պաշարի նեղութիւն չեն կրում։ Այստեղ—ասում է գնդապետ Վասսոսը—մղվում է մրցումն քաղաքակրթութեան՝ ընդդէմ բարբարոսութեան, մրցումն քրիստոնէութեան՝ ընդդէմ իւր հալածիչների։ Թողէ վերջը հասնի ծայրայեղութեան, բայց ես յուսամ եմ, որ ամենքն իրանց պարտքը կկատարեն և պատրաստ կլինեն զոհել իրանց արեան վերջին կաթիլը արդար գործի համար։

—

ԽԱՆԻՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԻ ՎԻՐԱՒՈՐՈՒԻԼԸ

„Standard"-ին հեռագրում են թէ Խանինի տաճկական բերդապահ զօրքը, թւով 7000, ուղևորուեցին դէպի յունական սահմանը։ Թուրք զինուորները ճանապարհին աւերեցին մի քանի քրիստոնէաբնակ գիւղեր և վիրաւորեցին Խանինի ռուսական հիւպատոս պ. ըՄ կլեբակնին և նրա որդուն. հիւպատոսի բողոքին ոչ մի բաւարարութիւն չէ տըրուած։

—

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐԸ ՄԶԿԻԹՆԵՐՈՒՄ

Կ. Պօլսից հեռագրում են «Frankf. Zeitung»-ին. — Թիւրքերը խիստ հիացած են Վիլհելմ կայսեր և Բեռլինի կաբինետի բռնած դիրքի վրայ։ Տաճկաց ոգևորութիւնը յատկապէս աչքի էր ընկնում այս աւուր սելամլըքի հանդիսի միջոցին։ Սպայները շատ են խօսում կայսեր բռնած դիրքի մասին, և Ստամբուլից մի անստոր դէպք է լսում, թէ այսօր շատ մզկիթների մէջ. ուրբաթ թւայ աղօթքում, իմամները մաղթանքներ են արել գերմանական կայսեր արևշատութեան համար։ (Կասկած չկայ որ Կրետէի Եղիա-Մարգարէի վանքումն էլ արտասուաթոր մաղթանքներ են կատարվում նորա համար)։

—

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից հեռագրում են „Berl. Tageb."-ին թէ՝ երբ Սայիդ փաշային առաջարկեցին մեծ վեզիրութեան պաշտօնն ընդունել, նա յայտնեց թէ կըհամաձայնուի այն պայմանով, որ Ջէվադ, Քեամիլ և Կարաթէօդօրի փաշաները նոյնպէս պատասխանատու նախարարութեան անդամներ լինին։ Բացի դրանից Սայիդ փաշան պահանջում է հեռացնել Րէվան, Մահմուդ-Ջէլալ-էդդին և Կապիտան փաշաներին, որոնք Իզզէթ փաշայի նման ոչ մի վստահութիւն չեն վայելում և ատելի են ժողովրդին։

—

ՆՈՐԱՑԵԱԼ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„Figaro"-ն հաղորդում է, թէ պետութիւնները կատարել համաձայնութիւն են կայացրել սուլթանին առաջարկելու հետևեալ ընդհանուր ռէֆօրմները. 1) մեծ վէզիրը նշանակվում է պետութեանց համաձայնութեամբ, 2) ելևմտից նախարարը պիտի եւրոպացի լինի, 3) արդարադատութեան նախարարը նոյնպէս եւրոպացի պիտի լինի, 4) նշանակվում է միջազգային յանձնաժողով՝ վարչութեան զանազան ճիւղերի վրայ հսկելու համար, 5) Թիւրքիային հնարաւորութիւն կտրուի, մեծ փոխառութիւն անել պետութեանց երաշխաւորութեամբ, այն պայմանով, որ անյապաղ և ճշգիւ իրագործուին ռէֆօրմները։

Իշալլահ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընթերցողներից շատերը անշուշտ յիշում են ի Տէր հանգուցեալ Մակար կաթողիկոսի յանկարծակի մահուան պարագաները և այն փաստը, որ Հայրապետի հաստատումութիւնը երկար տարիներ վայելած Հաջի Ակոբ Աբրահամեան ծառայն զողացել էր Նորին Վեհափառութեան պատկանեալ թանկագին իրեղէնները և տոկոսաբեր թղթերը։ Այս յանցանքի մասին քննութիւն էր նշանակուած։

Երևանի նահանգական դատարանը քննելով գործը, դատապարտեց Հաջի-Ակոբ Աբրահամեանցին բանտարկութեան մի տարի և 3 ամիս ժամանակով և որոշեց, որ դատապարտեալի մօտ գտնուած թանկագին իրեղէնները այլ և 15,000 ռուբլու տոկոսաբեր թղթերը վերադարձուին Ս. Էջմիածնի վանքին։

Գործը, պրօկուրօրի բողոքի և դատապարտեալի գանգատի հիման վրայ, անցաւ դատաստանական պալատը։ Աչքի առաջ ունենալով, որ դատապարտեալը արդէն վախճանուել էր, պալատը քննեց միմիայն դրամական պահանջը, որ վանքը հաշուել էր 30,225 ռուբլի։

Փետրվարի 26 ին դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը։

* *

Մեզ գրում են Բագուից. «Մուկուսայում փետրվարի 15 ին վախճանուած Միրզա Աթամալեանի այրին՝ տիկ. Աննա Աթամալեանը և հանգուցեալի ժառանգները, ինչպէս ծանուցից եկեղեցում ծխատէր քահանայ արժանապատիւ Եղիշէ Գեղամեանը, հետևեալ նուիրաբերութիւններն են արել ի յիշատակ հանգուցելոյն.

Ս. Էջմիածնի ճեմարանին, դրա տոկոսիքով մի սրբեգիր պահելու համար յանուն Աթամալեանի. . . 4000 ռ.

Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի տրամադրութեան . . 700 ռ.

Բագուայ Լուսաւորիչ եկեղեցուն. . . . . 500 ռ.

Շուշու Մեղրեցոց եկեղեցուն. . . . . . 300 ռ.

Ռուսիայի սահմաններն ապաւինած տաճկահայ գաղթականներին. . . . 500 ռ.

Բագուի Այլքատանոցում գետեղուած տաճկահայ մանուկների չորսի համար . 250 ռ.

Բագուի կլասիքական գիմնազիօնում սովորող չքաւոր աշակերտներին . . . . 250 ռ.

Խաչատուր Աբովեանի թոռների ապահովութեան ֆօնդին . . . . . 500 ռ.

Ցօրինակ այլոց, պարտք է արձանագրել և հետևեալը. հանգուցեալի քեռորդի տիկ. Սառա Ղոնդաղսազեանը փոխանակ պսակ դնելու իւր քեռու դագաղի վրայ՝ 50 ռուբլի է նուիրում Աբովեանի թոռների օգտին. Նոյն նպատակով հանգուցեալի Արշակ և Արտէմ Ցակոբջանեանց և Մարտիրոս Սարգսեանց գործակատարները դարձեալ պսակի փոխարէն նուիրում են 30 ռուբլի»։

* *

Այսօրուայ քաղաքային խորհրդի նիստում բացի հերթական խնդիրներից կը քննուի, ի միջի այլոց, պ. քաղաքագլխի առաջարկութիւնը, Թիֆլիզ ժամանող երկրիս կառավարչապետ իշխ. Գ. Ս. Գօլիցինին դիմաւորելու մասին։

* *

Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրէզէն ժամանելու է Թիֆլիզ մարտի 15 ին։

* *

Բաթումի յունական հիւպատոսը, ինչպէս հաղորդում է «Չեռնոմ. Վեստ.» լրագիրը, յայտնել է 1866 ից մինչև 1873 թիւը ծնուած յոյն հպատակներին մի տէրութեան կարգադրութիւն, որ նրանք ուղևորուին Յունաստան, զինուորական ծառայութեան մտնելու համար։

* *

Կովկասեան ուսումնարան. շրջանի պ. հոգաբարձուն տնային ուսուցչութեան իրաւունքի վկայականներ է տուել օրիորդ Մարգարիտ Մալումեանցին և Սօֆիա Ցակոբեանցին։

* *

Կառավարչական սենատը անհետեւանք է թողել «Մշակի» աշխատակից Խ. Մալումեանի բողոքը Թիֆլիզի դատարանական պալատի դէմ, որ դատապարտել էր պ. Մալումեանին քառասնօրեայ բանտարկութեան՝ «Նոր-Դար» լրագրի խմբագիր պ. Սպանդարեանի հետ ունեցած դատավարութեան առթիւ։ Սենատը հաստատել է Թիֆլիզի դատար. պալատի վճիռը։

* *

Թէ ինչու է Թիֆլիզում նաւթն աւելի թանգ գնով ծախվում, քան Մոսկվայում և Պետերբուրգում, այդ մասին մենք, թիֆլիզցիներս, ոչինչ չգիտէինք, որովհետև սովորել ենք նախախնամութիւնից սահմանուած համարել մեր շուկայի կենսական պիտոյքների գները, բայց այժմ, ինչպէս հաղորդում է «Կասպի» լրագիրը—պարզւում է, որ Թիֆլիզի նաւթավաճառները ի հաշիւ քաղաքացոց գրպանի «սինդիկատ» են կազմել, որպէսզի կարողանան նաւթի գինը միշտ բարձր պահել։

* *

Ստացանք Արման Բոզոյի «Մկնիկ» («La Souricière») մի արարուածով վօդեվիլի հայերէն փոխադրութիւնը, որ կատարել է ռուսերէնից պ. Վրոյրը։ Վօդէվիլը փոխադրուած է բաւական անհարթ լեզուով, տպագրուած է շատ մաքուր—«Արօր» տպարանում, գինն է 20 կոպէկ։

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Խնդրեմ «Արձագանքի» մօտակայ համարներից մէկում տեղ տալ հետևեալ տխուր փաստի նկարագրութեանը.

Մի քանի շաբաթ առաջ տեղւոյս հայ ուսանողների մէջ միտք յղացաւ, որ Վարդանանց նահատակութեան սուրբ յիշատակը ոչ միայն ուսանողները կատարեն (ինչպէս սովորաբար լինում էր մինչև այժմ), այլ դրան մասնակից անել ամբողջ հայ հասարակութիւնը, կամ եթէ այդ անկարելի լինի, գոնէ հասարակութեան մի մասը,—առանց որևէ կուսակցական միտումներով ղեկավարուելու։ Ուստի երգեցիկ խմբին հրաւիրեցին, ճառեր, ոտանաւորներ, երգեր և այլն պատրաստեցին. մի խօսքով կազմած ծրագիրը բաւական հետաքրքրական էր։ Մնաց բնակարանի հարցը, որի մասին այնքան էլ չէին մտածում, կարծելով, որ առաջին մարդը, որին դիմեն, ուրախութեամբ իւր բնակարանը ուսանողների տրամադրութեան կըյանձնի մի երկու երեք ժամով։ Առանց երկար ու բարակ մտածելու դիմեցին տեղական հարուստներից մէկին։ Բայց որքան եղաւ ուսանողների զարմանքը, երբ նրանից մերժումն ստացան, դիմեցին երկրորդին—նոյնպէս մերժումն, երրորդին, չորրորդին... բոլորին էլ մերժումն։ Վճռեցին դիմել Գասպարեան Անկելանոցի խորհրդին, կարծելով, որ անկելանոցի դահլիճը հասարակական է, և ոչ թէ մասնաւոր սեփականութիւն, ուստի նրա տալու կամ չտալու հարց չի կարող ծագել։ Ուսանողները չարաչար սխալուեցին։ Գասպարեան անկելանոցի խորհուրդն էլ քաղաքավարի կերպով մերժեց։

Թուցէ ընթերցող հայ հասարակութիւնը կարծի, որ այդ «պաններ» տանը այդքան մարդ չէր տեղաւորուի, կամ նրանց մէջ սովորութիւն չկայ այդչափ մարդ ընդունել իրանց պալատանման տները, կամ զուցէ ծախսից վախեցան։ Ոչ։ Խնդիրն այն է, որ զանազան «ժուրֆիքսներ», հրաւէրներ, շռայլ հարսանեաց հանդէսներ կարելի է կատարել, երբ նրանց առաջ դրուած է 50 հազար քաղցած թրքահայերին նպաստ հայթայթելու խնդիրը, իսկ «Վարդանանց նահատակութեան» յիշատակը յարգել և բարեգործական նպատակով տրուող «Հայկական երեկոյթ» գնալ չի կարելի։ Երեւի հայ ընթերցողը կարդացած կլինի լրագրներում, որ այստեղի հասարակութիւնն ևս մի երկու հազար «բաշխել է» գաղթականների օգտին, բայց որքան միկրոսկոպիկական է այդ նուէրը համեմատած այն գումարների հետ, որ նրանք վատնում են թղթախաղում, պարահանդէսներում և այլն տեղերում...

Ընդունեցէք և այլն.

Ականատես։

20 փետր. 1897 թ.
Մոսկվա։

* *

ՍԻՄՖԵՐՈՊՕԼ, 18-ն փետրվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Կիւրակի, փետրվարի 16-ին, տեղիս հայոց երկսեռ դպրոցի դահլիճում կայացաւ հասարակական ժողով, որի զբաղմանց առարկաներն էին երեցփոխանի, հաշուատեսների, աղքատաց հոգաբարձութեան անդամների և հասարակական գործերը վարելու, նրանց որոշ ուղղութիւն տալու համար 12 հոգուց բաղկացած մի յանձնաժողովի ընտրութիւնը։ Ժողովը նշանակուած էր երեկոյեան, ժամը 6-ին։ Ժողովին ներկայ էին սկիզբը 61 հոգի, մի քանիսը ժողովի ընթացքում պակասեցին։ Սա իսկապէս Սիմֆէրօպօլի համար մի բազմամարդ ժողով կարելի էր համարել։ Ժողովին նախագահում էր Օգսենտիոս ա. ք. Կոպչակճեանը։ Բաց անելով նիստը՝ հ. Կ. ը կարդաց թեմիս վիճակային կոնսիստորիայի հրամանագիրը, որով պատուիրվում էր, երեցփոխանի պաշտօնավարութեան եռամեայ ժամանակամիջոցը լրանալու պատճառով, ընտրել մի նոր երեցփոխան և սրան հաշուատեսներ։ Հրամանագիրը կարդացուելուց յետոյ, ժողովականներից մէկը յայտնեց ժողովին, որ երեցփոխան պ. Ստ. Չէլէզբիւնը իւր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում արդիւնաւոր գործունէութիւն է ցոյց տուել, հարկ է համարում նրան վերընտրել։ Ժողովը միանգամայն համակրծիք զըտնուելով պարոնի ասածին, բաց քուէարկութեամբ միաձայն նրան վերընտրեց երեցփոխան։ Պ. Ս. Չէլէզբիւնը իսկապէս անփոխարինելի մի երեցփոխան է։ Սրա երեցփոխանութեան օրով, չնայելով որ եկեղեցին արտակարգ բաւական խոշոր ծախսեր է ունեցել, սակայն և այնպէս նրա արդիւնքը սովորականից աւելի է։

Երեցփոխանի վերընտրուելուց յետոյ, ժողովում մի փոքրիկ միջադէպ անցաւ, որ թիւրիմացութեան և իրաւունքների սխալ ըմբռնելու արդիւնք պիտի համարել։

Հ. Նախագահից խօսելու իրաւունք խնդրելով՝ գաղթականների շահերի նախանձախնդիր Ղ. ք. Յ.-ը յայտնեց, թէ ինչու չեն հրաւիրուած ժողովի Սիմֆէրօպօլում իրանց բնակութիւնը մի քանի տարիներից ի վեր հաստատած գաղթականները, մինչդեռ նրանք ծխական չեն, ձայնի իրաւունք չունին։ Պ. Յ. Ս. ը սրան նկատեց, թէ, ի հարկէ, նրանք իրաւունք ունին մասնակցելու, այդ տեսակ հարց դնելը անտեղի է ու աւելորդ, բայց թէ ինչու նրանք չեն հրաւիրուել, դրա պատճառը հոգևորականութիւնն է, հոգևորականութիւնը, որ ծխականների մի կանոնաւոր ցուցակ չունի, ծխականները հրաւիրուել են հոգևորականութեան տուած ցուցակի համաձայն, ներկայ դէպքում պատասխանատւութիւնն ընկնում է հոգևորականութեան. վրայ։

Ցետոյ ժողովն անցաւ հաշուատեսների ընտրութեանը։ Կատարուած բաց քուէարկութեամբ հին հաշուատեսները միաձայն վերընտրուեցան։

Այնուհետև ժողովը զբաղուեց աղքատաց հոգաբարձուների ընտրութեան գործով։ Առաջարկուեցան թեկնածուներ այդ պաշտօնի համար, սակայն շատերը հրաժարուեցան։ Ի վերջոյ, չորս հոգու քուէատուփեր դրուեցան, որոնցից երեքը միայն ընտրուեցան։ Ընտրուածները սրանք են. Գ. Քիրլիեան (52 սպ. 5 սև), Յ. Եազըճիեան (31 սպ. 6 սև), Ղ. ք. Յովսէփեան (44 սպ. 14 սև)։

Ի վերջոյ, կարդացուեց ի լուր ժողովականաց 12 պատգամաւորների ընտրութեան և նրանց գործունէութեան մասին պ. Ս. Միսիրեանի կազմած կանոնադրութիւնը, որի առիթով մի փոքր թեր և դէմ խօսելուց յետոյ՝ ընդունուեց ի գործադրութիւն։ Տեղի ունեցաւ այնուհետև պատգամաւորների ընտրութիւնը։ Դրուեց 16 թեկնածուների տուփեր, բոլորն էլ ընտրուեցան, ուստի և ժողովը 12-ի փոխարէն՝ որոշեց 16-ին էլ պատգամաւոր համարել։

Ընտրուածները սրանք են.—Ա. Սպէնդիարեան, Ս. Միսիրեան, Գ. Դադուրեան (ծծեռնակի հեղինակ), Գ. Քուչներեան, Յ. Մազլումեան, Յ. Բուրնազեան, Յ. Քուչներեան, Մ. Կուսիկեան, Ա. Բուրնազեան, Գ. Քեարաբչեան, Վ. Խորասանեան, Պ. Գարագաշ, Յ. Բոյաճեան. Յ. Տաւութեան, Գ. Տնտմարեան, Գ. Աբէլեան։ Վր։

* *

ՄՈՍԿՎԱ, փետր. 21

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Փետր. 20 ին Охотничій Клубъ-ի դահլիճներում կայացաւ մի հայկական երեկոյթ բարեգործական նպատակով։ Նախ և առաջ խաղացին մի արար. վոդ. հեղ. Բալուցկու պ. Ծատուրեանցի թարգմանութեամբ, „Блаженъ, кто вѣруетъ" (Երանի հաւատացողին)։ Աֆիշները ռուսէրէն էին տպուած և մենք չգիտէինք յիշեալ պիեսի հայերէն խորագիրը։ Ներկայացումը շատ գեղեցիկ կերպով անցաւ շնորհիւ պ. պ. Մինասեանի, Չմշկեանի, օրի. Մարգարիտ Տէր-Ցակոբեանի կենդանի խաղին, օր. Ջանումեանցն էլ ոչ պակաս նպաստեց գործին, թէև նրա հայերէն արտասանութիւնը փոքր ինչ կաղում էր։ Մանաւանդ շատ ծիծաղ էր յարուցանում հանդիսականների մէջ «օյինբազ» Սիմոնը, որ իւր սիրահարական օյինբազութիւնները խեղճ Արտաշէսի շլինքին կապելով, ուզում էր հեշտութեամբ պրծնել իւր կնոջ Մարիամի (օր. Ջանումեանցի) ձեռքից։ Մենք միայն երկու բան չհասկացանք, այսինքն Владиміръ женихъ Сони, ոնց Արտաշէս դարձաւ, իսկ Соня (ըստ աֆիշի) Սաթենիկ։ Բայց այդ բաւական չէ, նոյն Վլադիմիրը՝ Սիմոնի բերանում, Արտաշէսից դարձաւ Վաղարշակ, գուցէ դա էլ մի նոր օյինբազութիւն էր Սիմոնի կողմից։ Ինչևիցէ հանդիսականները շատ գոհ մնացին այս հայկական ներկայացումից, որի նմանը վաղուց է, որ չէր եղած Մոսկվայում։ Դիլեատանթներին հասարակութիւնը վարձատրեց երկար ծափահարութիւններով։

Այնուհետև պ. Պեալովի երաժշտական խումբը նուագեց բեմի վրայ մի քանի եղանակներ։ Դրանից յետոյ հանդէս դուրս եկան և բեմի վրայ շարուեցան Հայոց «քաղցրախօսիկ և սիրուն օրիորդներ փափկասուն» և պ. Ասլանեանի ղեկավարութեամբ երգեցին՝

1. Джанъ-Иманъ } народныя пѣсни.
2. Джанъ-Гюлюмъ }
3. Баяти...муз. Корганова նուագեց օր. ***։
4. Романсъ, искол. Б. А.

Սպասում էինք, հետաքրքրուելով, թէ արդեօք ով է Б. А. անցաւ մի քանի րոպէ. հանդիսականների ուշադրութիւնը լարուած էր։ Մին էլ տեսնես, կուլիսների ետևից արագ քայլերով դուրս եկաւ բարձահասակ բարիտոն պ. Ամիրջանը։ Դահլիճը յանկարծ այնպիսի սարսափելի ծափահարութեամբ և կեցցէներով թնդաց, որ շնորհալի երգիչը մի քանի րոպէ ստիպուած եղաւ գլուխ տալով սպասել, որ հասարակաց ուրախութեան աղաղակները փոքր ինչ հանդարտին, որ կարողանայ երգել։ Բայց հազիւ երգեց հայերէն մի երկու երգ, ինչպէս ծափահարութիւնները սկսուեցան նոր ոյժերով. դա արդէն կատարեալ ցոյցերի բնաւորութիւն ստացաւ և մեզ համոզեց թէ պ. Ամիրջանը հասարակաց սիրելի գերասանն է։ Ապա ջութակի վրայ պ. Բոյաճեանը հիանալի կերպով նուագեց «Կռունկը»։ Բոլորից վերջը հայ օրիորդների խումբը պ. Ամիրջանի մասնակցութեամբ երգեց Կիլիկիա, Զէյթունի մարշ, և շատ քաղցր տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ։

Տասն և երկու ժամի մօտ սկսվեցան պարերը։

Այս երեկոյթի կազմակերպողն էր տիկին Մ. Դիւլբենդճեանը, որի ջանիւք երեկոյթը բուն հայկական բնաւորութիւն ունէր և բացի դրանից ներկայ հանդիսականներին համոզեց, թէ այսպիսի դիվերտիսմենտներ կարելի է կազմել, առանց օտար դերասանների օգնութեան դիմելու, լոկ հայոց առձեռն պատրաստ ոյժերով։

Աֆիշների ու ծաղիկների վաճառումից էլ բաւականին արդիւնք գոյացաւ, որ ինչպէս յիշուած է աֆիշների վրայ, յօգուտ Մոսկվայի չքաւոր Հայոց է նուիրուած։ ***

***

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ԲԱԳՎՈՒՄ

ԲԱԳՈՒ, 22 փետրվարի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Վարդանաց տօնի օրը Բագուի հասարակական ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ «Հայկական երեկոյթ» յօգուտ Մարդասիրական Ընկերութեան Գրադարան Ընթերցարանի։ Երեկոյթը գրաւել էր ահագին բազմութիւն. մանաւանդ որ անցեալ տարի, ցաճկահայոց կոտորածների և դժբախտ դէպքերի պատճառով՝ սովորական երեկոյթը չէր կայացել։ Բազմաթիւ էր հասարակութիւնը, շատերը տոմսակ չունենալով, յետ դարձան տները։ Տարաբախտաբար երեկոյթը ցանկալի տպաւորութիւնը չթողեց, և բացի պարերից, որոնք մեծ աշխոյժով անցան, մնացեալ մասերը շատ անգոյն էին։ Պատճառը ծրագրի աղքատ և անբովանդակ լինելն էր։ Խաղում էին մի ինչ որ նոր վօդեվիլ, որ շնորհիւ դերակատարների դանդաղ խաղին համարեա աննկատելի անցաւ։ Հիանալի էր ինչպէս միշտ միմիայն օր. Պապայեանի երգեցողութիւնը։ Ապա սկըսուեցին պարերը. մեծ ոգևորութեամբ լեզգիպարտոններ էին անում պարի սիրահար պարոնները և օրիորդները։ Չմոռանամ ասել, պարերին մէջ ընդ մէջ բեմի վրայ ի ցոյց դրուեցին կենդանի պատկերներ, որոնք մեծ մասով ընդհանուր բնաւորութիւն ունէին և ոչ մի կապ։ Երեկոյթը ոչ միայն ցանկալի տպաւորութիւն չգործեց, այլև արդարացի տրտունջների տեղիք տուեց։

Գլխաւոր պատճառն այն էր, որ այդ երեկոյթը «Հայկական երեկոյթի» նմանութիւն չունէր ամենևին, դուտ երեկոյթի մասը, որով պիտի հետաքրքրուէին հպարողներն էլ, ինչպէս ասեցի, աղքատ էր։ Եթէ տրվում է մի երեկոյթ դրոշմուած որևէ ազգի անունով, ապա այդ երեկոյթը պիտի կրէ նոյն ազգի բնաւորութեան, սովորութեան առանձնայատկութիւնները։ Եթէ լինում է երեկոյթ, և այն էլ «Հայկական երեկոյթ», ապա պիտի ի ցոյց դրուին Հայոց ազգի սովորութիւններից, առօրեայ երևոյթներից այնպիսիները, որոնք պատկերացնում են այդ ազգի կամ նրա ժողովրդի մի մասի, գաւառի կամ նահանգի բնորոշիչ գծերը, կեանքի հանգամանքները, ուրախութեան, տխրութեան, ծէսերի և այլ արարողութեանց կատարումները. մի խօսքով այնպիսի դէպքեր, երևոյթներ, որոնցով վերոյիշեալ ազգը զգալի տարբերվում է մի այլ օտար ազգից։ Իրաւ այս երեկոյթը նոյնքան հայկական էր, որքան և սովորական կրկնուող պարերեկոյթները։ Աւելի լաւ կլինէր, եթէ կարգադրիչուհիները կամ կարգադրիչները ուղղակի «պարերեկոյթ» հրատարակէին, այն ժամանակ հասարակութեան պահանջներն էլ քիչ կլինէին և. դժգոհութիւններն էլ ոչ այնչափ։ Հայկական երեկոյթ էին 94, 95 թուականի երեկոյթները, որոնք այնքան հռչակ հանեցին։ Անշուշտ վերոյիշեալ թուականների երեկոյթների աղքատութեան տակ ժողովուրդը բազմաթիւ խմբերով լցրել էր ժողովարանի դահլիճը։

Պիտի մխիթարուել, որ մուտքի կողմից շատ յաջող էր։ Տոմսակների վաճառումից մօտ 2000 թէ 1500 ռ. էր գոյացել, իսկ ընդհանուր մուտքը, նուիրաբերութիւններով և իրերի վաճառման արդիւնքով հանդերձ՝ հասնում է 6000 ռուբլու, որ մի հազուադէպ գումար է։

Շ. Խ.

***

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են.—«Ի պատիւ Ս. Վարդանանց, ամսոյս 22-ին, սիրողները տուին «Արշակ Բ» և «Կըլթ-Կըլթ»։ Արշակի դերը խաղում էր պ. Պետրոսեանը, իսկ Դրաստամատինը—պ. Ցարութիւնեանը։ Ժողովրդի ահագին բազմութիւն լցրել էր թատրոնը։ Երեկոյթը թէ խաղի և թէ մուտքի կողմից, լաւ անցաւ։ Ափսոս միայն, որ դժուար էր ժողովրդին կարգ պահպանել տալը»։

***

ՓԱՐԻԶ, 22 փետրվար (ն. տ.)

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Մեզ հաւատացնողներ կան՝ թէ Հանոտոյին միայն իւրաքանչիւր Ֆրանսիացուն յատուկ հայրենասիրութիւնն է ստիպում չհրաժարուել պաշտօնից։ Ես գիտեմ, այո, որ մեր հայրենիքում ոչ-հայրենասէր չկայ, սակայն համոզուած եմ, որ եթէ Հանոտոյի անձնասիրութիւնը և այսպէս ասել պաշտօնասիրութիւնը նրա հայրենասիրութիւնից աւելի չլինէր, նա պէտք է արդէն հրաժարուած լինէր, դէթ Ֆրանսիական սրտին խաղաղութիւն պատճառելու համար։ Մեր պատմութիւնը սրտի պատմութիւն է, մեր գրականութիւնն իսկ սրտի գրականութիւն է, օտարոտի թող չթուայ Ձեզ, եթէ ասեմ որ Ֆրանսիական քաղաքականութիւնն իսկ սրտի քաղաքականութիւն է։ Նոյն իսկ Րիշելիոյի օրերում այնքան ծանր չէ եղել Ֆրանսիայի համար ներքին և արտաքին քաղաքականութիւնը՝ ինչպէս է այս վայրկենիս, Հանոտոյի արտաքին գործոց նախարարութեան օրերում։ Քիչ յետոյ ես կըթուեմ Ձեզ այն էպիտետները, որ առատօրէն նուիրում են նախարարին Ֆրանսիական հրապարակախօսները, իսկ ես հանգիստ խղճով կարող եմ ասել թէ Հանոտոն ֆրանսիացի չէ։ Նա, ճշմարիտ է, քաղաքագէտ է և ժամանակակից քաղաքագէտ. սակայն նա որդի է երկու քաղաքականութեանց — գերմանական և անգլիական—այօրինի յարակցութիւնից։ Գերմանական սիրտն անթափանցելի է արեգակի ջերմացուցիչ ճառագայթներին, ալտրուիզմին, հանրամարդկային սիրոյ, որովհետև նա փակուած է երկաթէ պարսպի ետև, պարիսպ, որի վրայ տնկուած են միլիոնաւոր սուիններ և երկնից հրեշտակն իսկ խորշում է նրա մօտից անցնելուց։ Այսպէս է Հանոտոյի սիրտը։ Անգլիական ուղեղը կօրեկտ է արագատես և հեռատես, փաստերն ըմբռնող իրանց բոլոր ճշտութեամբ, սակայն այդ ամենը հարստահարող յօգուտ իւր շահերի. Նա իւր մի կտոր հացի համար թնդանօթ է ձգում, իսկ հարիւր հազարներով գնահատ մարդկանց համար փարիսեցիութեամբ Աստծուն է աղօթում.—Այսպէս է և Հանոտոյի ուղեղը։ Աւելացրէք դրա վրայ այն բուն անձնական փառքը և Ֆրանսիայից դուրս ժողովրդականութիւնը, որ նա ձեռք բերաւ վերջին ժամանակներս ստորացնելով հասարակապետութեան սլ բազան սկզբունքները և խաղ խաղալով Ֆրանսիայի հայրենասիրութեան և վրիժառութեան զգացմանց հետ, և հասկանալի կլինի այն դրգիռը, որ այժմ տիրում է բոլոր Ֆրանսիական զգացող սրտերում և դեռ մտածելու ընդունակ ուղեղներում։ Օ՜, չկարծի՛ք թէ յեղափոխանական պալատի «մեծամասնութիւնն» է Ֆրանսիան, ոչ, ֆրանսիական հասարակապետութիւնը 500 հոգուց չէ բաղկացած. այդ «համերաշխ մեծամասնութիւնը» սակայն մեծ ծառայութիւն մատոյց ֆրանսիական ազգի ինքնաճանաչութիւնը խորին կերպով զրգռելու, և ինձ համար երջանկութիւն է տեսնել, որ մեր հայրենիքում անսիրտ և անզգայ մարդկանց թիւը 500ից չէ աւելանում։ Դեռ մի կողմ թողնելով ժողովուրդը՝ բաւական է դրանց հակադրել այն 8000 ուսանողները, որոնք երէկ ամբողջ Փարիզը գրգռեցին իրանց զգացման աղաղակներով... Արդ՝ դժուար է կասկածել, որ կընկնի Հանոտոն և կընկնի ընդմիշտ, որովհետև ես դեռ հաւատում եմ թէ մեր ազգը դեռ մարմնապէս և հոգեպէս չէ այլասերուել։

Քիչ վերև խոստացայ Հանոտոյի վերաբերմամբ այժմ ժողովրդականացած էպիտետները թուել. ահա նըրանք. — «Բատինիօլի Ռիշըլիօ», Հանոտօ *անկարող* (Hanotaux l'impuissant) «Աբդիւլ-Հանոտօ», «Հանոտօ-Համիդ», Հանոտօ—*ամօթ*» (Hanotaux le honte), Hanotaux la Carpe (ձուկն) հայլն հայլն։ Եւ այս բառերը դուք լսում էք ֆրանսիական հրապարակախօսների բերանից և կարդում թերթերի սիւնակներում, ինչպէս կըտեսնէք այսօրուան թըղթատարով իմ Ձեզ ուղարկած լրագրներից։ Ահա այդ ամենին դիմանում է Հանոտոն, իսկ թէ այդ նրա հայրենասիրութիւնն է պատճառ թէ պաշտօնասիրութիւնը, այդ մասին թող խօսեն փաստերը, որոնց ես անցնում եմ, սկսելով Տիվօլիի բողոքի ժողովից, որ վերջացաւ ուսանողական ցոյցերով Փարիզու փողոցներում։

ՏԻՎՕԼԻԻ ԲՈՂՈՔԻ ԺՈՂՈՎԸ

Ութ հազար հոգի, այսինքն ճիշտ այնքան, որքան դահլիճը կարող էր տեղաւորել, մասնակցում էին երէկ երեկոյեան Տիվօլի Վօ Հալլի (Tivoli-Waux-Hall) միտինգին։ Ոստիկանութեան կանխաւ ձեռք առած միջոցները թոյլ չըտուին ահագին ամբոխին մտնել դահլիճը և ժողովուրդը, որոնց մէջ կային դեռ 4000 ուսանողներ, չինութիւնից դուրս մնաց։ Դահլիճի խորքում առանձին տրիբուն էր յատկացրած մամուլի ներկայացուցիչներին, պատգամաւորներին հայլն, որոնց թւում կային պ. պ. Մարսէլ Հաբէր, Ժէրօլ Րիշար, Վիվիանի. դ'Իւզ, Լը-Հէրիսէ, դը-Ռամալ, դը-Բէընիս, Կամիլ Պէլլտան, Էրնէստ Ռոշ. դեպուտատներ—Կօլլի, Փուրէստ հայլն, քաղաքային խորհրդարանի անդամներ Թէյէբօ, Միլվուա հայլն հայլն։ Պ. պ. Ժօրէս, Մօրիս Բարրէս և Անդրէ Լէֆէվր ներսումն էին խնդրել.

Ժամը $9^1/_2$ ին ձեռնարկեցին բիւրոյի կազմակերպութեան։ Գործադիր յանձնաժողովի անդամներից մէկը յայտարարեց թէ՝ ներկայ միութեանը պատուաւոր անդամներ են ընտրուած ձերբակալուած և դատապարտուած ուսանողները (բուռն ծափահարութիւն)։ Նախագահ ընտրուեց պ. Մ. Ժուկօֆիէ, որ ժողովը բացաւ կարդալով հետեւեալ յայտարարութիւնը, որ կպցրած էր պատին և տպագրուած այնքան մեծ տառերով, որ ամեն կողմից կարելի էր կարդալ։

«*Յեղափոխական ժողովը* 413 *ձայնով*, 83-*ի հակառակ*, *հաւանութիւն տուաւ կառավարութեան բըռնած դիրքին*»։

Ահագին աղաղակ բարձրացաւ դահլիճում և ամեն կողմից գոռում էին «Անկցի յեղափոխական ժողովը, անկցին մարդասպանները» (A bas la Chambre! A bas les assassins!)

Առաջին խօսքը տրվում է անտիսեմիտ ուսանողների խմբի նախագահ պ. Դիւբիւգին, որ խօսում է հետևեալը. «Փարիզու ուսանողութիւնը կազմակերպել է ներկայ ժողովը՝ բողոքելու համար ընդդէմ կառավարութեան անարգ (ignominieuse) ընթացքին, որով գործակից է դառնում Աբդիւլ-Համիդին։

Ուսանողներս, մոռանալով որ միմիանցից բաժանուած ենք գաղափարներով, համոզմունքներով և կուսակցութիւններով, այսօր միացել ենք և կոչումն ենք անում ամբողջ Ֆրանսիական ժողովրդին՝ առանց քաղաքական գաղափարների և կրօնական խտրութեան, որպէսզի ամբողջ աշխարհն իմանայ, որ մեր ազգը չէ կարող համերաշխ լինել մի կառավարութեան հետ, որ կազմուած է միայն արծաթապետութեան գործակալներից։ (Les agents de Haute Banque ասելով ակնարկում են Րոտշիլդի կողմնակիցներին)։ Մարդասպանների և դահճերի կուսակցութեան մէջ մեր կառավարութիւնն ընտրութիւն անելիս չը տատանուեց.—նա անցաւ մարդասպանների կողմը։ Պէտք է լաւ իմանան որ մենք կատարելապէս հաւատացած ենք թէ ֆրանսիական ազգը չէ ուզում մասնակցել այդ տմարդութեան և թէ յեղափոխական ժողովի 413 *ներքինիները* (eunuques) մեր ազգի զգացմանց արտայայտիչները չեն։ Կառավարութիւնը, որ մեզ բաժանում է, որպէսզի տիրէ, պիտի իմանայ որ ֆրանսիական ժողովրդի միացումը կրէտացւոց և յոյների կողմն է և ոչ թէ արծաթասէրների, որոնք աւելի լաւ են համարում միլիոնաւոր մարդկանց արիւնը թափել, քան թուրքական արժեթղթերը գլորել»։ (*Բուռն ծափահարութիւն եւ աղաղակներ «կորչեն հրէաները»*)։

Ապա բեմ է բարձրանում կաթոլիկ ուսանողների ներկայացուցիչ պ. Դը-Վիվ.

«Ես խօսում եմ—ասում է ճառախօսը—յանուն կաթոլիկ ուսանողների, *որոնցից շատերն արդէն ուղեւորուել են Կրետէ* (բուռն ծափահարութիւններ), խօսում եմ, այն օրուան նախօրեակին, երբ Ֆրանսիան միայնակ է մնում. . . Գերմանիայի հետ... կարմիր սուլթանին պաշտպանելու համար։

Համերաշխ մեր բոլոր ընկերների և լատինական թաղի մեր բոլոր բարեկամների հետ, որոնց հետ մենք միշտ միացած ենք, երբ խնդիրը վերաբերում է հայրենասիրութեան և մարդասիրութեան։

Հաւատարիմ Ֆրանսիայի աւանդական քաղաքականութեան քրիստոնէական աւանդութիւններին։

Մենք բողոքում ենք 300 հազար հայերի կոտորածի դէմ, կոտորած, որ կատարուել է լռակեաց Եւրոպայի դաւակցութեամբ։

Մենք բողոքում ենք այն գաղտագողի դերի ծածկելու դէմ, որ Ֆրանսիան խաղաց եւրոպական կօնցերտում։

Մենք բողոքում ենք ֆրանկօ-թըրքական դաշնակցութեան դէմ։

Մենք ցանկանում ենք. որ մեր կառավարութիւնը, որին յանձնուած է պաշտպանել մեր սկզբունքները և իրաւունքները, յանուն որոնց մենք զինուած ենք քսան և եօթ տարուց ի վեր, պահանջէ, որ կրետացի ժողովուրդն ազատօրէն օգտուի իւր իրաւունքներից և ինքը կարգադրէ իւր վիճակը։

Հելլենական դիւցազն ժողովրդին, որ այսօր քրիստոնէական քաղաքակրթութիւն պաշտպանում է նոյնպէս ինչպէս մի ժամանակ պաշտպանում էր իւր անկախութիւնը և իւր Աստուածները Ասիայից եկած բարբարոսների դէմ—մենք ուղարկում ենք մեր հիացման ջերմեռանդն հաւատքը»։ (*ծափահարութիւն եւ աղաղակներ. կեցցէ Յունաստան*)։ С. Р.

(Կըշարունակուի)։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆՑԻՆ

—

Ցայտնի պ. Գ. Ենգիբարեան իրաւաբանը «Արձագանքի» մէջ պատասխանելով իմ գրութեանը, ինձ արհամարհելով «մի պարոն» է անուանում. վայել չէ մի համալսարանական պարոնի, նախկին ուսուցչի այդպէս խօսել մի ծառայած ուսուցչի մասին, բայց ինչ արած. շատ կ'ուզէի ես էլ նրան արհամարհելու համար «մի ոմն պարոն» ասել, բայց ցաւում եմ, որ չեմ կարող. պ. Ենգիբարեանը «մի ոմն պարոն» չէ, այլ՝ ինքն իրաւաբան—բայց նախկին ուսուցիչ պատմութեան ազգային դպրոցի, նախկին քննիչ Քիւրդամիրեան աւազակաբնակ գաւառի, նախկին հաշտարար դատաւոր, ներկայ բերիս կօնսուլտ Քեարբալայ-Հաջի-Մաշադի - Ղուլի-օղլու, Բեօյուք-Պուտայի վիճելի արքունական հողերը անվիճելի դարձնող և այլն և այլն...։

Պ. Ենգիբարեանը իմ հասցէին գործ է դնում վիրաւորիչ և անվայել խօսքեր «սուտ է ասում, սուտ է և հնարած է». ես ի յարգանս նրա դիպլոմին նախկին ուսուցչութեան, այդ տեսակ բառեր գործ չեմ դնիլ, այլ կասեմ՝ «բարեհաճում է մոռանալ, սխալուել». օրինակ. պ. Ենգիբարեանը բարեհաճում է սխալուել, մոռանալ. և ասում է՝ «ես գրատուն չէի յաճախում և գործ չէի չինում, որովհետև Բալայեանին չէի համակրում և չէի կարող գործ կատարել.» Ոչ պարոն, մոռանում էք որ այս տարի Մարդ. Ընկ. ընդհանուր ժողովում ձեր գրադարան չյաճախելը և գործից փախչելը բացատրեցիք նրանով, որ գրապահը անճիշտ մարդ է, իւր ժամանակին գրատուն չէ բացում, իսկ այժմ դուք ձեր խօսքը փոխում էք և մեղը իմ վզին էք գնում, որին չէք արժանացրել ձեր համակրանքին և որը յանդգնութիւն է ունեցել ձեզ չհաւանելու։

Բայց ընդունենք, որ ճշմարիտ ես մի վատ մարդ եմ, յանդգնել էի ձեզ չհաւանել և որի հետ դուք գործ չինել չէիք կարող, բայց միթէ գրադարանական յանձնաժողովում դուք և ես էինք միայն, չէ որ կան ես ուրիշ չորս անդամ, միթէ նրանք բոլորն էլ Ձեզ անարժան ընկերներ էին։ Չէ որ նրանցից մէկը Ձեր նախկին և վաղեմի ընկեր և բարեկամն է, որի տունը Ձեր միակ օթևանն էր, երբ Դուք դեռ ես Բեօյուք-Պուդայում նաւթային հողեր չունէիք. երկրորդը... (թողնենք սրա Ձեզ մատուցած ծառայութիւնները), երրորդ, և չորրորդը տասը տարով ծառայած ուսուցիչներ են, որոնք ոչնչով ձեզանից պակաս չեն. և վերջապէս գրադարանական յանձնաժողովի երկու անդամը Մարդ. Ընկ. Խորհրդի անդամներ են—ամբողջ Բագուայ հասարակութեան կողմից։ Դուք ուղենալով ինձ վիրաւորել, վիրաւորում էք և Բագուայ հասարակութեան և Մարդ. Ընկերութեանը, որ նրանք իրանց բարձրութեան վրայ չգտնուեցան և չկարողացան Ձեզ յարմար ընկերներ ընտրել, որ Դուք կարողանայիք գրադարանում գործ չինել։

Չէ, պ. Ենգիբարեան, ուրիշ պատճառ կայ Ձեր գործերից փախչելուն, որոնց մասին ի հարկէ Ձեզ համար հաճելի չի լինիլ լսել, բայց քանի որ այդ հարցը Դուք էք հրապարակի վրայ գըրել, ահաւասիկ ես պատրաստ եմ մէկ մէկ թուել։

Կան որոշ մարդիկ—որ կամենում են ամեն տեղ ընտրուել, գործի մէջ լինել. անուն վայելել, բայց սիրում են, որ «սև գործը» նրանց տեղը ուրիշները կատարեն։

Այդպէս էիք, վստահանում եմ կարծել, տրամադրուած և Դուք, պ. Ենգիբարեան, երբ այս տարի գրադարանական յանձնաժողովը վերակազմուեց և Դուք միաձայն անդամ ընտրուեցիք, Դուք երևի մտածում էիք. «ես իրաւաբան, դիպլոմաւոր, իսկ սրանք հասարակ վարժապետներ, ուրեմն հասկանալի է որ նախագահը ես կլինեմ, գործը սրանք կըշինեն, ես միայն «тонъ» կըտամ»։ Սակայն սխալուեցիք Ձեր հաշիւների մէջ. (չէ որ մարդս սխալական է)։ Այդ հասարակ վարժապետները անելիք գործերը անդամների վրայ բաժանեցին, մի մասն էլ, այն է՝ գրատան վիճակագրական տեղեկագիրը կազմելը Ձեզ յանձնուեցաւ, որովհետև նախընթաց տարուայ ընդհանուր ժողովում (երբ Դուք նոր էիք եկել, մեծ մեծ գաղափարական բաներից էիք խօսում, յարձակվում յանձնաժողովի վրայ, գործ պահանջում) Դուք վիճակագրական տեղեկագիր կազմելը յիշեցրիք (միայն յիշեցրիք, որովհետև Ձեզանից առաջ ուրիշ ժողովներում ուրիշները, եթէ չեմ սխալվում պ. Ն. Աբէլեան և Բ. Ճխեան քանիցս պահանջել էին այդ) և միաձայն գրադարանական ժողովի անդամ ընտրուեցիք, բայց Ձեզ յանձնած գործը չկատարեցիք։ Հասարակ - վարժապետները՝ ամենածանր գործերը կատարում էին և ամեն նիստի հաշիւ տալիս, իսկ Ձեր մասին արձանագրութեան մէջ գրվում էր «պ. Ենգիբարեանը—յանձնած գործը չկատարեց, յիշեցնել նրան որ շտապի». այս բանը մի քանի անգամ կրկնուեց։ Դուք գալիս էիք ինձ մօտ (ես արձանագիր անդամ էի) և հանդերձ ձեռով ասում—«մեր տղայ, ինչ կարիք կայ այդպիսի բաներ գրելու» կամ—«մեր տղա՛յ, դու ընթերցարանի վիճակագրական տեղեկագիրը կազմում ես, արի իմ տեղը և գրադարանինը կազմիր, ես ընդհանուր ժողովում քեզ կըտամ, կըկարդաս անուն կըհանես»։ Տեսէք մարդու, կ'աշխատեմ մեղմ լինել, յանդգնութեան. իմ աշխատանքը բարեհաճում է ինձ տալ, որ ես անուն հանեմ, իսկ ինքը խայտառակութիւնից ազատուի։ Այդ տեսակ առաջարկութեան արժանի պատասխանը ի հարկէ դուք չէր գալ ձեզ, պ. իրաւաբան, և ի հարկէ դրանից յետոյ Դուք ինձ չէիք արժանացնել Ձեր համակրանքին։

Սա առաջին և երկրորդ պատճառները, այժմ գանք միւսներին.

Ամառը Բագու էր գտնվում Ձեզ և ինձ ծանօթ մի յարգելի պարոն, որ պաշտօն էր որոնում. դուք աշխատում էիք նրա համար գործ գտնել, բայց ինչ ճանապարհով. իմ և միւս ընկերոջ միջոցաւ Դուք ուզեցաք արձակել մեր այժմեան գրապահին, որ նրա տեղը տաք այն պարոնին. ես էլ և մեր ընկերն էլ Ձեր այդ վատ մտադրութիւն հասկացանք և արժանի պատասխանը տուեցինք։ Երբ դուք տեսաք որ բանը բացուեց, իսկոյն ուրիշ գոյն տուիք ձեր միտումներին. ի հարկէ յիշում էք թէ ժողովարանում ինձ ինչ ասացիք.—«մեր տղա՛յ, ես ուզում եմ մեր գրապահին արձակեմ, որ քեզ նշանակենք, դու յարմար ես, այժմ վարժապետ չես. գործ միջոց չունիս. քեզ կընշանակենք ամսական հարիւր ռուբլի, օգնական կըտանք»։ Այս միևնոյն, ներեցէք որ իսկական անունով եմ դրոշմած, ստոր առաջարկութիւնը դուք ինձանից թաքուն արել էք և մեր միւս ընկեր ուսուցիչ Ա. Նազարէթեանին։ Ասացէք խնդրեմ այս բոլոր ձեզ արժանի առաջարկութիւնները անելուց և նրանց արժանի պատասխանները ստանալուց յետոյ, էլ երեսատեղի հարող էր մնալ, որ գայիք մեզ հետ երես առ երես նստելու ժողովում, լաւ իմանալով որ ես լռողներից չեմ և Ձեր արարքները ժողովում քննութեան նիւթ կըշինեմ։ Ահա այն պատճառները, մեծ. պ. Ենգիբարեան, որոց աղագաւ Դուք ինձ չէիք արժանացնել Ձեր համակրանքին և չէիք կարող գրատուն մտնել, այլ ստիպուած պիտի փախչէիք և մեղը իմ կամ գրապահին վզին փաթաթէիք...։

Պ. Ենգիբարեանը ասում է՝ «սուտ է ասում Բալայեանը, որ ես ամառը Բագուում չեմ եղել» և ինձ անպատուելու և մասնաւոր կեանքի վրայ արատ ձգելու համար գրում է...» եթէ Բալայեանը ինձ չի տեսել իւր մանկած տեղերում, այդ չի նշանակում, որ ես քաղաքումս չեմ եղել»։

Ամառը գրադարանական յանձնաժողովի երեք անդամները գնացին, վճռեւ կայացնելով, որ մնացած երեքը իրաւունք ունենան ժողով գումարելու և ընթացիկ գործերը վարելու։ Ես իբրև անդամ քարտուղար, միշտ գտնուելով գրադարանում, գործ պատահած ժամանակ, ուղարկել եմ, պ. Ենգիբարեան, Ձեր յետևից և միշտ պատասխան եմ ստացել «այստեղ չէ, Բօրժոմ է գնացել», կուզէ իրօք դուք այստեղ էք եղել, բայց ձեր սովորեցրած ծառաները այդպէս են պատասխանել, երբ Ձեզ ձրիաբար աշխատելու են կանչել, իսկ երբ Ձեմբերեքենդից են եկել Ձեր յետևից՝ ասել են «աղէն տանն է» «համեցէք»։

Բայց ինչպէս ասացի, ընդունենք որ Դուք այստեղ էք եղել և Ձեզ չեմ տեսել, Դուք այդ իբրև մի անպատուաբեր հանգամանք էք դնում իմ վերաբերմամբ. մի մոռանաք որ ես եօթը տարի Բագուայ 700—800 երեխաների դաստիարակիչ եմ եղել և շատ պատուաւոր անհրում ուսուցիչ, ես միշտ գտնուել եմ այն տեղերում, ուր իմ աշակերտներն են եղել իրանց ծնողների հետ. կամ ծնողները իրանց զաւակների հետ... ես մեղաւոր չեմ եթէ այդ տեղերում չեմ հանդիպել Ձեզ։ Սակայն ես Ձեզ պիտի տեսնէի գրադարանում, բայց Դուք գործից փախչում էիք, երևի գրատան գործերի ժամանակ Դուք—Բեօյուք Պուտայի վիճելի արքունական հողերը անվիճելի դարձնելու խնդրով զբաղուած էիք։

Այո, այդպիսի տեղերում և ժամանակներում մենք միմեանց հանդիպել չէինք կարող, դարձեալ մեղը իմը չէ. ես հասարակ վարժապետ եմ, ո՞րտեղ կարող եմ ձեզ հետ տար մեկնել, ինչպէս Դուք բարեհաճում էք սպառնալ. «ուզում է ինձ հետ հաշուի բռնուել, բայց ես այդ նրան թոյլ չեմ տալ. . .»։ Ճշմարիտ որ վախենում եմ այդ սպառնալիքից. ամենքին յայտնի է որ իրաւաբաններից շատերը դատարանի դուռը քալելը լաւ սերտել են և լաւ գիտեն մեղաւորին արդար դուրս բերել, և վիճելի հողերը—անվիճելի սեփականութիւն դարձնել...։

Պ. Ենգիբարեանը խօսելով ընդհանուր ժողովում իմ մօտ նստած անդամների մասին՝ նրանց արհամարհում է, ծաղրում է, «կապոյտ շապկաւոր, վաճառուած է» անուանում։ Նախ՝ այն երեկոյ ոչ ոք չկար կապոյտ շապկով, երկրորդը ենթադրենք որ կային. ո՞վքեր են կապոյտ շապիկ հագնում. հասարակութեան մէջ ընդունուած է, որ «կապոյտ շապկաւոր» «блюзники» ասում են ուսանողներին և իրանց զաւը քըտինքով ապրող արհեստաւորներին և մշակներին։ Եւ տեսնում էք համալսարանական պ. Ենգիբարեանը, երեկուայ ուսանողը, որի շալվարի վրայից դեռ ես չեն անցել ուսանողական նստարանի հետքերը, իրան թոյլ է տալիս ծաղրել, արհամարհել ուսանողներին և արհեստաւորներին։ Պ.

Ենգիբարեան, ներեցէք եթէ յիշեցնեմ այստեղ, որ այժմ ամենաքաղաքակիրթ երկրներում ամենամեծ հասարակական գործիչները իրանց պատիւ են համարում ուսանողների կամ առաւել ևս արհեստաւորների շրջանում լինել, նրանց հետ գործել—նրանց սրտի, մտքի և կարիքի թարգման լինել. իսկ Դուք նրանց ծաղրում էք:

Եթէ ուզում էք դրանով ինձ վիրաւորել որ իմ ընկերները ուսանողներ են, կամ արհեստաւորներ և մշակներ, իմացէք ուրեմն, որ ես ինձ համար պատիւ եմ համարում նրանց ընկեր լինել, նրանց հետ գործել—նրանց կարիքները զգալ, քան շատ դիպլօմաւոր պարոնների ընկեր լինել ու նրանց հետ գործել: Չէ, Դուք չէիք կարող յարգանքով խօսել այն օրուայ ժողովների մասին, ովքեր էլ նրանք լինէին, որովհետև նրանք սովորեցին՝ նախագահութեան ցանկացող պարոնին յետ քշուել և նոյն իսկ անդամութեան չքուէարկուել...

Դուք Ձեզ թոյլ էք տալիս նրանց «վաճառուած» անուանել. նախ այն օրուայ ժողովականները—մաքուր խղճով և գիտակցութիւններով էին առաջնորդվում բացի մէկից, որ ամեն մի հարցի ժամանակ մի բան գտնում, որ դալմադալ ձգէ խանգարէ, երկրորդ ո՞վ պիտի նրանց գնէր. ես. միթէ մոռանում էք որ ես մի հասարակ վարժապետ եմ և Բիօյիք—Պուտայում հողեր չունիմ. երրորդ ինչ բանի համար ես պիտի կաշառէի իմ առաջարկած և պահանջած խնդիրը—գրականագէտներին օգնելու խնդիրն էր, որ ամբողջ ժամուլը ցնծութեամբ ընդունեց, որին կարիք չկար այդպիսի բաների համար կաշառել. չորրորդ—մարդիկ պիտի կաշառէի խորհրդի անդամներ ընդունելու համար, բայց մի մոռանաք որ խորհրդի իննը անդամները այնպիսի յարգելի պարոններ են, որ հէնց որ նրանց անունները արուեցին—պղտոր ջրում ձուկ որսողները, յետ քաշուեցին: Չէ, Դուք դրանով ուզեցել էք և ինձ անպատուել և ընտրուած պարոններին, իբր թէ նրանք վարձով բերած մարդկանց միջոցաւ են ընտրուել: Խոստովանեցէք որ այդ վարմունքը, առնուազն, տակտի բացակայութեան ապացոյց է:

Պ. Ենգիբարեանը բարեհաճում է սխալուել՝ ասելով, որ ես սուտ եմ ասել՝ Դիլզարեանը չէ տուել և նոյն իսկ իբրան առանձին ասել է... «ախր պարոն Ենգիբարեան, ինչու՞ բաց արիր».

Նախ՝ պ. Դիլզարեանի խօսքերը ես բառացի եմ բերել և նա այդ ասել է պ. Ենգիբարեանի խօսքերի դիմաց, երբ դրան իբրև վկայ հրաւիրեց: Ես համոզուած եմ որ պ. Դիլզարեանը ինքը անձամբ այդ կըվկայէ. իսկ ինչ վերաբերում է մէջ բերած պ. Դիլզարեանի խօսքերին, այդ ասուել է ոչ թէ այն մտքով ինչ մտքով կամայականօրէն ուզում է բացատրել պ. Ենգիբարեանը, այլ համ ուզեցել է ասել, որ այն խօսակցութիւնը, որ Դուք ուզում էիք բանալ գրապահի մասին աւելորդ է, ընդհանուր ժողովին անվայել (ինչպէս և եղաւ, որ թէ նախագահը և թէ ժողովականները լռեցնել տուին) և թէ նոյն իսկ ձեզ համար այդ խօսակցութիւնից շատ խայտառակ բաներ կըծնեն, փառք Աստուծոյ պ. Դիլզարեանը կենդանի է, կարող է վկայել:

Պ. Ենգիբարեանը ինձ մեղադրում է, որ իմ գրութեան մէջ շատ խօսակցութիւններ բաց եմ թողել, իսկ շատ տեղ նոյն բառերով չեմ գրել. խոստովանում եմ, որ ես ուրուագիր չեմ և ոչ էլ մեքենայ և ոչ էլ մտադրութիւն եմ ունեցել ժողովում խօսուած շատ աւելորդաբանութիւնները գրել, աշխատել եմ հետաքրքիր նիւթերի մասին եղած խօսակցութեանց էութիւնը հաղորդել, այդ պատճառով բաց եմ թողել, ոչ միայն պ. Ենգիբարեանի խօսածներից աւելորդ կրկնութիւնները, այլև իմ և ինձ շատ հաճելի պարոնների խօսակցութիւններից:»

Ինչ վերաբերում է եկեղեցու շինութեան մասին ասած պ. Ասրիբէգեանի ասածներին, առ այդ այն կասեմ, որ ես պարոնի ասածները համարեա բառացի եմ բերել և նա ինքն կըվկայէ այդ մասին. պ. Ենգիբարեանը սխալվում է ասելով, որ պ. Ասրիբէգեանը իբրև խորհրդի նախագահ — չէ իրագործել ընդհանուր ժողովի վճիռը՝ այն է՝ եկեղեցու բակում գտնուած շինութիւնը վերադարձնել եկեղեցուն: Անցեալ տարուայ ընդհանուր ժողովում այդ տեսակ խօսակցութիւն և վճիռ չէ եղել. արձանագրողը ես եմ եղել և արձանագրութիւնը մնում է. այդ միայն պարոնի հընարած ենթադրութիւնն է:

Պ. Ենգիբարեանը գրում է ծաղրելով որ ես ընդունակ չեմ հասկանալու թէ՝ Բարեգործական Ընկերութիւնը ինչպէս կարող է ձեռք բերել առանց բարձրագոյն հրամանի անշարժ կալք: Խոստովանում եմ, որ ես մասնագէտ չեմ և գուցէ չեմ հասկանում այդ բաները, ինչպէս և չեմ հասկանում թէ ինչպէս կարելի է, առանց բարձրագոյն հրամանի —Բեօյիւք-Պուտայի նաւթային արքունական հողերը սեփականութիւն դարձնել մի պարոնի. այդ բաները թողնում եմ Ձեզ, պ. Ենգիբարեան:

Պ. Ենգիբարեանը իմ գրածի անճշտութիւնը ուզում է ցոյց տալ նրանով, որ պ. Ն. Դաւթեանի արձանագրութեան մէջ չեն լինել այն խօսքերը, որ ես գրել եմ: Ծիծաղելի փաստաբանութիւն, իսկ ես հարիւրաւոր խօսակցութիւններ կըբերեմ, որոնք նոյնպէս չեն լինի պ. Ն. Դաւթեանի արձանագրութեան մէջ. միթէ այդ կընշանակէ որ նրանք տեղի չեն ունեցել: Ոչ, այլ այդ նշանակում է որ պ. Դաւթեանը իբրև արձանագիր, նախ՝ անկարող էր բոլոր խօսակցութիւնները բառացի գրել. և երկրորդ պ. Դաւթեանը իբրև արձանագիր պիտի գրէր գլխաւոր խօսակցութեանց էութիւնը և վճիռները և ոչ թէ այն ամենը ինչ որ պնտել խօսում էր, ծաղրվում և սրախօսվում, սրա կամ նրա հասցէին: Վերջապէս ես բարոյական պարտ եմ դնում թէ ընդհ. ժողովի նախագահի, թէ պ. Դաւթեանի և թէ ժողովում գտնուած պարոնների վրայ հերքել կամ հաստատել երկուսիս ասածները ևս:

Արսէն Բալայեան:

23-ն փետր. 1897 թ.
Բագու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԱՊ ԺԱՄԵՐ

III

«Արձագանքի» № 15-ում յայտնի խնդրի նկատմամբ իմ կարծիքները և խորհուրդները կարդալով՝ շուշեցիք՝ փոխանակ «բարին» ընտրելու և «խոտանը» դէն ձգելու, վեր են կացել և զուր տեղը անհանգիստ արել յարգելի պ. Մուրացանին (տես «Արձ.» № 22), որին և ճանաչելով իբրև իմ յօդուածի հեղինակ՝ ենթարկել են, անկասկած, զանազան անախորժ հարցուփորձի և մինչև անգամ նկատողութիւնների. իսկ եթէ նրանք սխալ են և մոլորուած, կամեցել են—յամենայն դէպս—իմանալ նրա միջոցով իմ ով լինելն և այլն...

Եթէ ես պ. Մուրացանի հետ անձամբ ծանօթ լինելու պատիւն ունենայի, ես նրան կըխնդրէի ոչ թէ տալ ինձ իմ մասին նրան դիմողների անուն-ազգանունները, Աստուած մի արասցէ, այլ հասկացնել այդ պարոններին նրանց վարմունքի տգեղութիւնը: Եւ որովհետև նա իւր կողմից էլ այդ դասը հրապարակով չկարդաց նրանց, ուստի ես պարտք եմ համարում մի երկու խօսք ասել այստեղ:

Ամենից առաջ ընդունեցէք, խնդրեմ, ձեր՝ իմ նկատմամբ՝ ուշադրութեան համար՝ իմ փոքրիկ շնորհակալութիւնը ամենամեծ դժգոհութեամբս հանդերձ. դժգոհութեամբս՝ որովհետև ձեր ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը դուք արտայայտում էք անշնորհք ձևով և միշտ դատապարտելի ճանապարհով:

Ասում են ջրի կաթիլը քար էլ է ծակում: Շատ ճշմարիտ է. և այդ ո՛չ այն պատճառով, որ նա աւելի ուժեղ է քան քարը, ո՛չ, այլ որ նա՝ թէպէտև մի թոյլ հեղուկ՝ իւր անդադար և անընդհատ կաթկթոցի շնորհիւ միայն՝ կարողանում է ծակել այնպիսի մի կարծր մարմին, որպիսին է քարը: Սակայն բընութեան մէջ կան, տարաբախտաբար, այն տեսակ ապառաժ քարեր, որոնց վրայ ո՛չ թէ ջրի, այլ հալած երկաթի և պողպատի կաթիլներն անգամ անզօր են լինում մի փո՛քր փոս անել՝ այնտեղ նստելու համար:

Հազար անգամ ասուել է և տարին տասներկու ամիս ի լուր աշխարհի կըրկնվում է, որ պսեվդօնիմ (կեղծանուն) կրող անձնաւորութեամբ հետաքրքրուիլը և նրան ճանաչելու կամ գտնելու համար զանազան մանուածապատ ճանապարհներ վերցնելը անտեղի և շատ անվայել բան է: Բայց ո՞ւմ էք ասում, ո՞ւմ համար էք կրկնում:

Ջրի կաթիլներ՝ ապառաժ քար...

Ի՞նչ գործ ունիք, եղբայր, հեղինակի հետ: Լրագրի մէջ լոյս է տեսնում մի յօդուած. դուք կարդում էք և ձեզ դիւր չէ գալիս: Դիւր չէ գալի՜ս... Բայց դա շատ քիչ է: Հապա ինչպէս անենք՝ ձեր կարծիքով: Լռե՞նք. և մինչև ե՞րբ: Ո՛չ, ո՛չ, լռել անկարելի է: Տեսնել ինչ որ երևում է, լսել ինչ որ հաստատ աղբիւրից հաղորդվում է և լռել, դա յանցանք է, և աններելի յանցանք: Պէտք է ասել, պէտք է գրել, ուղղելի լաւը խրախուսելի, առաջ գնալ, իսկ վատը կանգնի և անշարժութեան մէջ մնալով՝ տեղն ու տեղը մեռնի. դա պարտք է և առաքինութիւն: Ուրեմն՝ ձեզ դիւր չգալը ըէ զօն չէ. ձեր քէֆին դիպչելը նշանակութիւն չունի, դատարկ բան: Ուրիշ է, եթէ ձեզ անարդար կերպով վիրաւորում են, անխիղճ զրպարտում են. ուրիշ է, եթէ յօդուածի մէջ յայտնուած մտքերը վնասակար են, անիրագործելի են և հեռի ճշմարտութիւնից. Այդ դիպուածում՝ իրաւ է ձեր՝ երես տուած երեխաների նման՝ խռովել—վիրաւորուելը, իրաւ է հեղինակին հալածելու և նրանից վրէժ առնելու վրայ մտածելը. աւելի լաւ է—սա կլինի իմ խորհուրդս՝ ընդ միշտ՝ իմ վերաբերութեամբ, ինչու համար և ոչ ուրիշների նկատմամբ—աւելի լաւ է, ասում եմ, վերցրէք և նրա դէմ էլ դուք գրեցէք, հերքեցէք սուտը, վնասակարը և սրանց տեղ հրատարակեցէք ձերը՝ աւելի ուղիղը, աւելի օգտակարը. երևան հանեցէք հեղինակի զրպարտութիւնը, անվայել նպատակը և ձգտումները: Սրանից աւելի լաւ պատիժ: Այդ բանն անելու համար էլ, փա՜ռք Աստուծոյ, ձեզ տուած է մեծ իրաւունք և ընդարձակ ասպարէզ. օգտուեցէք էլ՜: Բայց ո՛չ, դուք այդ չէք անում. քունջ ու պուճախ ընկած հետախուզում էք յօդուած գրողին, որը կամենում է իւր կարծիքները, դատողութիւնները և մտքերը հրապարակի վրայ դնելով՝ ինքը անյայտ մնալ ընթերցող հասարակութիւնից. չէ՞ որ նա ազատ է այդպէս անելու, չէ՞ որ նրա այդ վարմունքը օրինաւոր է և կամքը անբռնաբարելի:

Ենթադրենք մի րոպէ, որ պ. Մուրացանը ձեզ յայտնում է, որ իմ անունս և ազգանունս Գրիգոր Գրիգորեան է... Միթէ դուք բաւականացաք դրանով. Ի հարկէ ոչ: Դուք նրան անձամբ չէք ճանաչում. դուք առաջին անգամն էք լսում և իմանում, որ կայ այդպիսի մի անձն, որը ձեզ և ձեր երկիրը լաւ ուսումնասիրած լինելով հանդերձ՝ ինքը դարձեալ մնում է ձեզ համար մի առեղծուած: Յետո՞յ... Յետոյ էլ պիտի սկսէք ամեն՝ անշուշտ աններելի՝ միջոցներ և ջանք գործ դնել այդ մարդուն մազից մինչև եղունգը ճանաչելու համար. ո՞վ է, ո՞րտեղացի. ինչով է պարապում և այլն և այլն: Շատ կարելի է, որ այս բոլոր հարցերին ճիշդ և լիակատար պատասխան առնելով էլ չբաւականանաք, և ի վերջոյ, կամենաք էլ, որ ես մի անգամ իմ լուսանկար պատկերը դնել տամ յօդուածիս տակ. . «Անմի՜տ ցանկութիւն, ապարդի՜ւն աշխատանք...

Ձեզ հանգստացնելու և ձեր մտքերը խաղաղացնելու նպատակով միայն կ'ասեմ և հետևեալը.

Երբ իմ մէջ յղացաւ միտք իմ պարապ ժամերից օգտուել. երբ առաջին անգամ՝ իմ կեանքում՝ ես գրիչ վերցրի լրագրի մէջ գրելու համար, ես ուխտեցի փոքր, ամենափո՜քր ծառայութիւն անել իմ ընկերին՝ իսկ ամեն մարդու՝ առանց խտրութեան՝ ես ընդունում եմ ինձ ընկեր... Ես ուխտեցի չունենալ որ և է մէկին անուանարկելու կամ վիրաւորելու միտումն, չըղձացնել անձնական հաշիւներով, լինել խիստ անաչառ և երբէք չդարձնել իմ գրիչը թշնամական զգացմունքների և վրէժխնդրութեան գործիք: Եւ իմ ուխտս՝ ուխտ է, բարի բուն նշանակութեամբ.

Ուստի՝ խնդրում եմ, հանգիստ թողէք ինձ և՝ իմ պատճառով՝ ուրիշներին. Թողէք, որ ես, գլուխս քաշ ցանեմ իմ սերմերը: Եթէ նրանցից չորսը փշերի մէջ խեղդուի, հինգն էլ ապառաժի վրայ այրուի, չորանայ՝ փոյթ չէ: Վստահ եմ և խորին կերպով համոզուած, որ մինը գոնէ—տասից մէկն էլ բաւական է— կ'ընկնի պարարտ հողի մէջ և կըտայ ցանկալի—բարի պտուղ:

Հէնց այդ էլ կլինի ընկերիս մատուցած իմ ծառայութիւնը...

Սերմացան:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների:

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի:

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Բ. Ա. ՆԱԻՍԱՐԴԵԱՆ.—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խուզարկութական հետազօտութիւն են անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻՍԱՐԴԵԱՆ:

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԳԵԶՆԵՆԿՕԻ)

Սօլօլակ, Գանովսկայա փողոց, № 3

Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր:

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների:

Փ. Վ. ՁՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը):

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը):

Գ. Կ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, ժամը 1—2, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., հինգշ. և շաբաթ օրերը):

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը):

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը):

Ի. Ե. ԱԻԵՏԻՍՕՎ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը):

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու:

Ա. Ն. ԳԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն:

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում: Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական:

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է:

Աղքատների համար ձրի է: Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել:

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ Կոնսիստորիայի Ատեանի մէջ նշանակուած է անուրդ առաջիկայ մարտ ամսոյ 10-ին առանց կրկնանրդի, Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցոյ պատկանեալ գիւղօրայքը վարձով տալու:

Անդամ Կոնսիստորիայի՝
Համազասպ վարդապետ:
(1—3)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ցանկացողները կարող են ստանալ Վարչութեան գիւանում ամեն օր Թիֆլիզի քաղաքային խորհրդի իրաւասուների 1897—1901 քառամեակի ընտրողական ցուցակները: (3—3)

ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՂ

ԿՈՂԲԱՑ ԱՂԱՀԱՆՔԻՑ

Ցանկապէս ՍԵՂԱՆԻ և ԿԵՐԱԿՐԻ համար պատրաստած

ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

ՑՈՐԵՆԱՐԺ ԱՂՕՐԻՔՈՒՄ

Վաճառվում է ԹԻՖԼԻԶԻ առաջնակարգ բօկալէյնի խանութներում:

Հեռախօս № 168.

№ 1. ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ

ԿԷՍ փունտանոց փաթեթը	5 կ.
ՄԷԿ փունտանոց »	8 կ.
ՏԱՍԸ փունտանոց քսակը	75 կ.

№ 2. ԿԵՐԱԿՐԻ ՀԱՄԱՐ

ՄԷԿ փունտանոց փաթեթը	6 կ.
ՏԱՍԸ փունտանոց քսակը	30 կ.

Մեծ քանակութեամբ գնողների համար առանձին զիջումն է լինում:

Առաջնակարգ հիւրանոցները եւ ուշադիր տանտիկնայք, որոնք կամենում են պատուել իրանց հիւրերին, պէտք է անպատճառ սեղանի վրայ ունենան այս ընտիր և ճերմակ աղ, որ պատրաստվում է Կողբայ հանքի ամենաընտիր և «ապակեայ» կոչուած աղից:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել Թիֆլիզ այս հասցէով

(50—18) Ерванду П. Манденову.

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ Թիֆլիզի քաղաքային Խորհրդի իրաւասուների 1897 թ. մայիսի 18-ին նշանակուած ընտրութեանց համար ընտրողական ցուցակները կազմուած են և ձեռնարկուած է լրացուցիչ ընտրողական ցուցակների կազմելուն, որոնց մէջ կըմտնեն Թիֆլիզ քաղաքի այն տանտէրներն ու հողատէրերը, որոնք 1895 թ. առաջին կիսամեակի համար գնահատական տուրքի ապառիկները կըվճարեն մինչև այս տարուայ մարտի 5-ը: (3—2)

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ մարտի 2-ին, կիւրակի, երեկոյեան ժամը 7-ին Թիֆլիզի դումայի դահլիճում նշանակուած է ընկերութեան անդամների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի պարապմունքի առարկաները լինելու են.—1) Ընկերութեան 1897 թուի ընդհանուր, այն է՝ կենտրոնի և 18 ճիւղերի նախահաշիւների քննութիւնն ու հաստատութիւնը. 2) Պաշտօնատար անձանց ընտրութիւնը, այն է՝—ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի, խորհրդի 4 անդամի և 2 փոխանդամի, վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և գրադարանական յանձնաժողովի 5 անդամի:

Ընկերութեան անդամները հրաւիրվում են վերանորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով ընկերութեան գրասենեակը Սերգիեվսկայա փողոց, տուն Ալիխանովի № 16: (3—2)

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 25/6-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, մարտի 5/17 ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետն է ԳԱՐՐԻԳ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում:

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա:
Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարեկենդաղեանին, Սիօնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա:
Բագւում.—Պ. Ս. Դիլզարեանին, Կոլիւբակինի հրապարակ:
Նովօրօսիյսկում.—պ. Մելխիոր Հերշինրօդերին: (20—19)

ԼՈՒՍԱՅԱԾ եւ ԳԶԱԾ ԲՈՒՐԴ

Օթոցների, վերմակների

ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՅԼ ՊԻՏՈՅՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՔՐԱԾ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԾ

ԱԼ. ԹՈՒՇՈՒՐԵԱՆՑԻ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

ՑՈՐԵՆԱՐԺ ԼՈՒՍԱՅԱՐԱՆՈՒՄ

Հեռախօս № 168.

Ցանկացողները կարող են դիմել Միքայէլեան փողոց, Ալ. ԹՈՒՇՈՒՐԵԱՆՑԻ ծխախոտի խանութը, (ոչ հեռու Վօրօնցովի արձանից): (50—13)

ԿԵՆԴՐ. ՄԱՏԵՆԱԴ.-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐ. ԸՆԿ. ԿՈՎԿԱՍՈՒՄ

Սերգիեվսկի փողոց, տ. Ալիխանովի № 16.

Ստացվում են մայրաքաղաքների և տեղական նշանաւոր ռուսերէն և հայերէն պարբերական հրատարակութիւնները: Ունի հարուստ բաժին Կովկասագիտութեան վերաբերեալ: Մատենադարանը հետզհետէ հարստանում է բելետրիստիկայի վերաբերեալ ռուս և հայ հեղինակութիւններով:

Բաց է առաւօտեան	9—2	ժամը,
երեկոյեան	5—8	»
Կիւրակէ և տօն օրերին	9—12	»

Վճարը՝ տարեկան—4 ռ., ամսական—40 կ., մուտքը—2 կոպ., աշակերտները վճարում են կէսը: